

тральной библиот



ՀԶՄՈՒԾԻՆ
1970 - Ռ

ՌՆԺԸ
ԻԵՏԱՐԻ


Ապրիլ


ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Դ

1970





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ՀԻՄՆԱՄՅԱԿԻ ԱՌԹՅՎ**

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՄ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ
ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱԶՆՈՅ,
• ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ
Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ
ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

ՑՆԾԱ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴ, ՔԱՆՁԻ ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՍՏՈՐՈՏԻՆ, ԱՀԱ ՅԻՍՈՒՆ
ՏԱՌԻՆԵՐԷ Ի ՎԵՐ ԿԱՅ ՈՒ ԿԸ ԶԱՐԳԱՆԱՅ ԲՈՒ ՆԱԽԱՀԱՅՐԵՐՈՒԴ ՄԱՅՐ ԵՐԿԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ,
ԽԱՂԱՂ ՈՒ ԱՊԱՀՈՎ:

ԱՅՍ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԵԴԱՐԶԻ ՍԵՄԻՆ, ՊԱՀ ՄԸ ՆԱՅԷ ԴԷՊԻ ԱՆՑԵԱԼԸ ՀԵՌԱԽՈՐ, ԱՆ-
ՇՓՈԹ ՏԵՍՆԵԼՈՒ ԵՒ ՈՒՂԻՂ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼՈՒՍԱԽՈՐ ՆԵՐԿԱՆ:

ՓԱՌՔԻ ԴԱՐԵՐԷ ՈՒ ԱՆԿՐԿՆԵԼԻ ԼՈՅՍ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԷ ՅԵՏՈՅ, ԴՈՒՆ ՏԵՍԱՐ ԱՆ-
ԿՈՒՄԸ ԹՎՈՒՀԻ ՄԱՅՐ ՔԱՂԱՔ ԱՆԻՆ, ԵՒ ԱՊԱ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐՁԻՆ ՊԵ-

ՏՈՒԹԵԱՆ Ի ԿԻԼԿԻԱՆ: ՅԱԶՈՐԴԵՑԻՆ ՎԵՑ ԱՀԱՐԿՈՒ ԴԱՐԵՐ, ՈՐՈՆՔ ՏԱՐԻՆ ՔԵԶ ԴԷՊԻ ԵԶՐԸ ՄԱՀՈՒԱՆ ԱՆԳՈՒՆԴԻՆ: ԴԱՐԵՐ՝ ՍՏՐԿՈՒԹԵԱՆ, ՀԱՄԱԾԱՆՔՆԵՐՈՒ, ԴԱՐԵՐ՝ ԱԻԵՐՈՒՄՆԵՐՈՒ, ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ, ԴԱՐԵՐ՝ ԳԱՂԹԻ ՈՒ ԱՆՎԵՐՋ ՑՐՈՒՄԻ ԴԷՊԻ ՀԵՌԱՌՈՐ ԱՓԵՐ ԿՈՐՍՏԵԱՆ:

ՀԱՅԱՍՏԱՆ, ՇԱՏԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԴԱՐՁԱՄ ԷՐ ԼՈԿ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹԻՆ, ԻՍԿ ԴՈՒՆ, ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԱՆՈՒՆ ԶՈՒՆԵՑՈՂ ԱՄԲՈՒ: ՔՈՒ ԻՍԿ ՊԱՊԵՆԱԿԱՆ ՀՈՂԻ ՎՐԱՅ, ԴՈՒՆ ՃՈՐՏ ԷՐ, ԻՐԱՒԱԶՈՒՐԿ ՑԵՂ, ՀԱՆԳՈՒՐԺՈՒԱԾ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՆ:

ԲԱՅՑ ԵԿԱԻ ԺԹ ԴԱՐԸ ԵՒ ՔԵԶԻ ԲԵՐԱՒ՝ ՀՐԱՇՔԻ ՀԱՄԱԶՈՐ ԶԱՐԹՕՆՔԻ ԱԻԵՏԻՍԸ: ԱՐԹՆՑԱԻ ՀՈԳԻԴ, ՀԱՌԱՔԵՑԻՐ ՈՒԺԵՐԴ ԿԱՄՔԻ, ՓՇԵՑԻՐ ԿԱՊԱՆՔՆԵՐԴ ԴԱՐԱՌՈՐ ԵՒ ԽԱՒԱՐԷՆ ԴԷՊԻ ԼՈՅՍ ԹՈՒՐ ԻԲԵՐԵ ՄՀԵՐ ՍԱՍՈՒՆՑԻ, ՇՈՂԱՑՆԵԼՈՎ ԹՈՒՐ ԿԱՅՈՒՄԿԻՆ:

ՀՆԱՄ ԷՐ ԺԱՄԸ ՀԱՅ ԱԶՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ: ՀԵՐՈՍԱԿԱՆ ՄԱՔԱՌՈՒՄՆԵՐ, ՊԱՏՄՈՒԹԻՆ ԿԵՐՏՈՂ ՔԱԶԵՐ, ԱՆՀԱՌԱՍԱՐ ԿՈՒԻ, ՆԱՀԱՍԱԿՈՒԹԻՆ, ԾԱՆՐ ՅՈՒՍԱԽԱՐՈՒԹԻՆՆԵՐ, ԵՒ ՅԵՏՈՅ, ՅԵՏՈՅ՝ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՂԷՏԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, 1915-Ի ԵՂԵՐՆԸ ԱՊՐԷԼԵԱՆ, ԱՌԱՋԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՆԸ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԿՈՉՈՒԱԾ ՄԵՐ ԴԱՐՈՒՆ:

ԿԸ ԹՈՒԷՐ ԹԷ ՓԱԿՈՒԱԾ Է ԳԻՐԶԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԶՆ Է ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿՐԻՆ:

ԲԱՅՑ Ո՛Ր, ԱՍՏՈՒԱԾ ԶԵՐ ԼՔԱԾ ԶՔԵԶ: ՆՈՐ ՅՈՅՍ, ՆՈՐ ՀԱՌԱՏՔ ԵՒ ՆՈՐ ՈՒԺ ՏՈՒԱԻ ՔԵԶԻ, ԵՒ ՔԱԶ ՈՐԴԻՆԵՐԴ, ԻՐԵՆՑ ՍՈՒՐԲ ԱՐԻՆՈՎ՝ ԿԵՐՏԵՑԻՆ, ԲԱՐԶՐԱՅՈՒՑԻՆ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿՈՇՈՂԸ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ, ԱՐԱՐԱՏԻՆ ԸՆԾԱՅ: ՈՒ ԹԷԵԻ ՊԱՀ ՄԸ, ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՒՄՆԻ ՍԵԻ ԹՈՒՂԹԸ ՍՊԱՌՆԱՅ ԽԵՂԴԱՄԱՀ ԸՆԵԼ ՔԵԶ ԵՒ ՈՏԷԻ ԿՈՒԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԴ ՍՈՒՐԲ, ԱՀԱ 1920-Ի ՎԵՐԶԻՆ ԱՄՍՈՒ ՍԵՄԻՆ, ԹՈՒՍԱՅ ԵՂԲԱՅՐ ԱԶԳՈՒԹԵԱՆ ՀՈՒԺԿՈՒ ԲԱԶՈՒԿԸ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԻ ՔԵԶԻ ԵՒ ԻՍՊԱՌ ԶՔԱՑԱԻ ՎՏԱՆԳԸ ՄԱՀԱՅՈՒ: ՊԱՅԾԱՐԱՅԱԻ ԵՐԿԻՔԸ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՅՈՑ: ԾԱԳԵՑԱԻ ԱՐԵԳԱԿԸ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ, ԵՒ ՇԻՆԱՐԱՐ ՅԱՌԱԶԸՆԹԱՅՔԻ: ՍԿԱՐ ԱՇԽՈՒ ԵՒ ԾԱՂԿԻԼ, ՀԱՅՈՎ ՈՒ ԼՈՅՍՈՎ ԱՌԱՑ:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՒՔ ՈՐ ՊԱՏՈՒՑԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՒ ԹՈՒՂԹԸ ԱՆԻՐԱԻ, ՎԵՐԶՆԱՊԷՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԱՄՈՒՐ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ: ԱՌԱՆՑ ՄԱՅԻՍԵԱՆ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ, ԱԼԵՔՍԱՆ ԽԱՊՈՒՄՆԻ ՄԱՀԱՅՈՒ ԾՐԱԳԻՐԸ Ի ԿԱՏԱՐ ՊԻՏԻ ԱՇՈՒԷՐ 1918-ԻՆ, ԱՌԱՆՑ 1920-Ի ՆՈՅԵՄԲԵՐԵԱՆ ՎԱՀԱՆԻՆ, ՊԻՏԻ ՓԷՐ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԿԱՄԱՐԸ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՎ ԵՒ ՆՈՅԵՄԲԵՐԵԱՆ ԼՈՒՍԱՔԱՅՈՎ, ՎԵՐԶ ԳՏԱԻ ԹՇՈՒԱՌ ՈՒ ԱՆՏԵՐ ՎԵՐԱԿԸ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ:

ԱՅՍՊԷՍ Է ՈՐ, ՎԵՑ ԴԱՐԵՐՈՒ ՔԱՌՍԸ ԵՏԵԻ ԹՈՂԱԾ, ԴՈՒՆ ԱԶԳՈՒԹԻՆ ԴԱՐԶԱՐ ՔՈՒ ՍԵՓԱԿԱՆ ԱՆՈՒՆՈՎԴ ՊԱՅՈՒՐ, ՔՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՆԻ ՈԳՈՎ ԱՆՊԱՐՏ, ՔՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԴՐՕՇԱԿՈՎԴ ՀՊԱՐՏ: ԵՒ ԱՅՍՊԷՍ ՅԱՌԱԶ ԸՆԹԱՅԱՐ ՀԱՍՏԱՑ ՔԱՅԼԵՐՈՎ, ԶԵՌՔ-ԶԵՌՔԻ ՏՈՒԱԾ ԵՂԲԱՅՐ ԺՈՂՈՎՈՒՐԿՆԵՐՈՒ ՀԵՑ: ԵՒ ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԱՐԻՆ ՔՐՏԻՆՔՈՎ, ՇԻՆԱՐԱՐ ԿԻՐՔՈՎ, ԿԱՌՈՒՑՈՂ ԶԵՌՔԵՐՈՎ ԵՒ ՀՈԳԻՈՅ ԼՈՅՍՈՎ, ԿԵՐՏԵՑԻՐ ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՊԵՐԾ ԵՐԿԻՐԴ ԱՐՄԵՆԱԿԱՆ, ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: ՀԻՆԳ ԱՆԳԱՄ ՏԱՍԸ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԹԱՅՔԻՆ, ԴՈՒՆ, ԶԱՔԱՇ ՈՒ ՀՈԳԻՈՎ ԱԶԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԴՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՍՏԵՂԵՑԻՐ ՇՈՅԼՈՐԷՆ՝ ԱՅՆՔԱՆ, ԻՆԶՔԱՆ ՀԻՆԳ ԱՆԳԱՄ ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ՄԷԶ:

ՅԱՐԳԱՆՔ ՔԵԶ ՆԱՀԱՍԱԿ ԺՈՂՈՎՈՒՐԴ:

ՅԱՐԳԱՆՔ ՔԵԶ ՎԵՐԱԾՆԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴ:

ԱՅՍ ՊԱՏՄԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԿԸ ՈԳԵՒՈՐԸ ՈՒ ԿԸ ՄԻԹԱՐԸ ՆԱԵԻ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ, ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԴԱՍԸ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՄԵՐ ՀԱՌԱՏԱՑԵԱԼ ԶԱՌԱԿՆԵՐԸ, ՎԱՄՆԶԻ ՄՐՏ ԵՐԿՈՒՀԱԶԱՐԱՄԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՄԲ, ՆՈՒԻՐԱԳՈՐԾՈՒԱԾ Է ԱՆՔԱԿՏԵԼԻ ՄԻԱՍՆՈՒԹԻՆԸ ՄԵՐ ԱԶԳԻՆ ՈՒ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ: ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ԶՐԱՎԱՐ ԵՒ ՍՈՒՐԲ ՅՈՎԱԷԺ ԿԱՌՈՂԻԿՈՍ, ՄԻԱՑԱՆ ՈՒ ՆՈՅՆԱՑԱՆ՝ «ՎԱՄՆ ՅԻՍՈՒՄ, ՎԱՄՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ» ՈՒՍՏՈՎ ՈՒ ԳՈՐԾՈՎ: ԱՅԴ ՆՈՅՆ ՈՒՍՏՈՎ ՈՒ ԳՈՐԾՈՎ՝ ԱԶԳ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՊՈՒԱԾ ՄԱՅԻՆ ԴԱՐԵՐ ՈՒ ԴԱՐԵՐ, ՄԻՆԶԵԻ ՄԵՐ ՕՐԵՐԸ: ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ԻՐ ԾԱԳՈՒՄՈՎ, ԻՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԻՐ ՀՈԳԵՔԱՆՈՒԹԵԱՄԲ ԱՆՀԱՅՐԵՆԻՔ ԶԷ, ԱՊԱԶԳԱՅԻՆ ԶԷ: ԱԻԵԼԻՆ, ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ, ԲՈՂՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԷԶ, ԶՐԱՎԻԴ ԿԱՆԳՆԱԾ Է ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱԾԱԽ ՀԱՆԳԻՍԱՑԱԾ Է ԱԶԳՈՒԹԵԱՆ ԴՐՕՇԱԿ, ՀԱՅՐԵՆԻՔ ԿԵՐՏՈՂ ՈՒԺ, ԵՐԲԵՄ ԻՐ ՆԱՀԱՍԱԿՈՒԹԵԱՆ ԻՍԿ ԳՆՈՎ:

ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵՒՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՐԶԱՌՈՒԹԵԱՆ ՄԷԶ, ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՌԱՏՔՈՎ ԱՌԱՅԵԼ ԱՄՐԱՊԻՐԿՈՒԱԾ Է ՄԻԱՍՆՈՒԹԻՆԸ ՀԱՅՈՑ ԱԶԳՈՒԹԵԱՆ, ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՇՈՐՀԻՆ, ԱՌԱՅԵԼ ԱՄՈՒՐ ԽԱՐԱՍՈՒԱԾ Է ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՌԱՏՔԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՀՈԳԻՈՅՆ ՈՒ ԿԵԱՆՔԻՆ ՄԷԶ:

ԱՅՍՐ ԱԼ ՈՒՐԵՄՆ, ԻՆԶՊԷՍ ՄԻՇՏ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԻՐ ՍՊԱՍԱՌՈՐՆԵՐԸ ԵՐԶԱՆԻԿ ԵՆ ՈՂԶՈՒՆԵԼՈՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԳԸ ՀԱՅՐԵՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ, ՈՐ ՅԱՂՔԱՆԱԿՆ Է ՀԱՅ ԱԶԱՍԱՐ

ԳՐԱԿԱՆ ՍՐՔԱԶԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ, ՊԱՅՔԱՐ, ՈՐՈՒՆ ԼԱՅՆ ՁԱՓԵՐՈՎ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԵՆ ԲԱԶՈՒՄ ԱՆՁՆՈՒՐԱՑ ՈՒ ՔԱԶ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ, ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ ՀԵՐՈՍՈՒԹԵԱՄԲ:

ՎԵՐԱԾՆԱԾ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑԱԾ ԵՐԱԶՆ Է ԲՈՎԱՆԴԱԿ ՀԱՅ ԺՈՂՈՒՐԳԻՆ, ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ:

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԲԱՐՁՈՒՆՔԷՆ, ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՅՍՈՐ ԿՕՐԸՆԷ ՅԻՇԱՏԱԿԸ ՀԱՅ ԱԶԳԻ ԲԻՐԱՒՈՐ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐՈՒՆ ԵՒ ՔԱԶՈՐԳԻՆԵՐՈՒՆ, ՈՐՈՆՔ ՀԵՐՈՍԱՑԱՆ ԱԶՍՈՒԹԵԱՆ ԱՐԻՒՆՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՎՐԱՅ՝ «ՎԱՍՆ ՅԻՍՈՒՍԻ, ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ»:


ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՍՈՅՆ ՏԱՐԻՈՅՆ ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍԻ 29-ԻՆ, ՄԵՐ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ՀԱՆԴԻՍԱՐՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԵՏԻ ԿԱՏԱՐՈՒԹԻՆ ԵՒ ԿԵՆԴԱՆԻ ԽՕՍՔՈՎ ՊԵՏԻ ՈԳԵԿՈՉՈՒԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՒՐԳԻՆ, Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ:

«ԿԵՑՈՐ՝ ՏԷՐ, ՋԺՈՂՈՎՈՒՐԴ ՔՈ ԵՒ ՕՐԸՆԵԱ՝ ՋԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ՔՈ, ՀՈՎԵԱ՝ ԵՒ ԲԱՐՁՐԱՑՈՐ՝ ՋՍՈՍԱ ՅԱՅՄԱՀԵՏԷ ՄԻՆՉԵՒ ՅԱԻՏԵԱՆ»։ ԱՄԷՆ:

Հայր Դե Ռ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տոսա կոնդակս ի 24-ն ապրիլի
1970 փրկչական ամի,
և ի տոմարիս հայոց ՌՆԺԹ,
ի մայրականս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 682





ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՒՆ ՂԵԿԱՎԱՐԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ՀԱՐԱՋԱՏ ԲԱՐԵՎԱՄԸ

«Արդարությամբ հաստատի աթոռ
իշխանության»:
(Առակաց ԺԶ 12)

Ապրիլի 22-ին լրացավ սովետական պետության հիմնադիր և հայ ժողովրդի մեծ բարեկամ Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան հարյուրամյակը:

Հոկտեմբերի շնորհիվ վերածնված հայ ժողովուրդը, երախտագիտությամբ ու ցնծությամբ է նշում սովետական եղբայրական ժողովուրդների հետ պատմական այդ հիշարժան տարեթիվը:

Արդարև, պատմական ճշմարտություն է, որ Վ. Ի. Լենինը վճռական դեր խաղաց Սովետական Միության ժողովուրդների, այդ թվում նաև՝ հայ ժողովրդի նակատագրի որոշման գործում:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով ավարտվեց դարեր ու դարեր տևող մեր ազգային ողբերգությունը:

Հայ ժողովուրդը նոր հաստատված կարգերի հաղթանակի մեջ գտավ իր նվիրական երազների մարմնացումը. ազգային, քաղաքական, մշակութային, տնտեսական վերածնության հնարավորություն, ապահովություն, խաղաղություն, պետականություն և հայրենիք:

Առաջին իսկ օրից Մայր Աթոռ ս. Էջմիածինը սթափ ոգով, հայրենասիրական ջերմ

զգացումներով ողջունում էր ստեղծված կայունությունը, իրապաշտոյեն և հեռատեսությամբ գնահատում իրադարձությունների նոր և փրկարար ընթացքը:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի կեդարյա (1920—1970 թթ.) պատմությունն անցել է Հայաստանում սովետական իշխանության հաստատման և գոյության պայմաններում, հայրենի հարազատ պետության ապահով հովանու տակ, «Տուր զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ» ավետարանական պատգամի լույսի ներքո:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ, առաջին մեկ օրից կանգնեց վերածնված մայր հայրենիքի պաշտպանության հայրենասիրական դիրքերում, հանդես եկավ ազգային-եկեղեցական միասնության պատգամով, հոգևոր ծառայության և զոհողության իր բաժինը բերելով հայոց ավերված աշխարհի վերակառուցմանը և դժբախտ հայ ժողովրդի մնացորդաց-ի վերածննդյան աշխատանքներին, հայրենի հարազատ պետության հովանու շուրջ համախմբելով «գործն մոլորական աստեղաց» ցրված հայ ժողովրդի բեկորներին:

Այս ուղղությամբ ու այս ոգով հայրենասիրական արտագին գործունեություն են ծավալել 1920—1970 թվականներին, Գևորգ Ե, Խորեն Ա, Գևորգ Զ և Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետները, ճշմարտորեն վկայելով, որ մեր երկիրն ու ժողովուրդը ազգային վերածննդյան փրկարար ու լուսավորողի են բռնել՝ շնորհիվ լեհիկյան ազգային քաղաքականության և Հայաստանում սովետական կարգերի հաստատման:

1927 թվականի նոյեմբերի 17-ին և համար 944 սրբատառ իր կոնդակով Գևորգ Ե կաթողիկոսը Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի առիթով գրում էր. «Ժորհրդային Միության բազմազան ազգերը սրտի բերկրությամբ առնում են նոր իշխանության հաստատման տասնամյա հոբելյանը, որպես հետևանք Մեծ Հեղափոխության...»

Այս տոնը մեծ է առավելապես մեր ժողովրդի և մեր աշխարհի համար...

Այժմ մեր կիսամեռ, հյուծված ժողովուրդը ավերակների միջից ելավ նոր կյանքի և ի շինություն հայրենյաց՝ շնորհիվ խորհրդային իրավակարգի ձեռքով պարզկված խաղաղության, ազգերի հավասարության և մեր դրացիների համերաշխության»:

Լեհիկյան հիմնական իրազործումներից մեկը հանդիսացավ ազգային հարցի ուղիղ և ճիշտ դրվածքն ու լուծումը:

Լեհիկյան ազգային քաղաքականության շնորհիվ Սովետական Միության բազում ժողովուրդներ, այդ թվում նաև՝ հայ բազմաշաքար ժողովուրդը, դուրս եկան ազգային բարգավաճման նոր ու խոստումնալից ուղի:

Վ. Ի. Լենինը և իր գաղափարի ընկերները դեռևս 1914—1917 թվականներից սկսած, ինչպես փաստաթղթերը ցույց են տալիս, անողորք քննադատության են ենթարկել Հայաստանը բաժան-բաժան անելու, հայ ժողովրդի նկատմամբ բռնությունների և ջարդերի վայրագ քաղաքականությունը:

1917 թվականի հունիսի 9-ին Վ. Ի. Լենինը համառոտապատկերական սովետների առաջին համագումարում անդրադարձավ Հայաստանի հարցին և առաջարկեց իր ծրագիրը՝ «Հայաստանը դարձնել անկախ Հայկական Հանրապետություն»:

Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին Վ. Ի. Լենինը նորից անդրադարձավ այս հարցին՝ հաշտարներով, որ իշխանության գլուխ գալուց հետո ինքը և իր ընկերները կապահովեն Ռուսաստանում ապրող բոլոր ճնշված ժողովուրդների լիակատար ազատությունն ու անկախությունը՝ կիրառելով նաև այդ իրավունքը «Ամբողջ Հայաստանի նկատմամբ»:

Վ. Ի. Լենինը քանիցս ընդգծել է Հայաստանի Արևմտյան և Արևելյան երկու հատ-

վածների և կամ Ամբողջ Հայաստանի ազատագրման, հայ ժողովրդի վերամիավորման և հայկական պետականության ստեղծման ծրագիրը:

Սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո, ժողովրդական կոմիսարների սովետը Վ. Ի. Լենինի գլխավորությամբ խաղաղության և հողի մասին մեծ հրովարտակաների հետ միասին, հռչակեց ճնշված ազգերի, այդ թվում նաև՝ հայերի ինքնորոշման իրավունքը՝ որպես ազգային քաղաքականության հիմնական, անխախտելի սկզբունք:

1917 թվականի դեկտեմբերի 23-ին Վ. Ի. Լենինը ժողովրդական կոմիսարների նիստում պաշտպանում է իր սկզբունքը՝ Ամբողջ Հայաստանի ինքնորոշման վերաբերյալ: Սովետական կառավարության սույն նիստի քննարկմանը ներկայացված որոշման նախագիծը կոչվում էր՝ Դեկրետ Հայաստանի մասին:

1917 թվականի դեկտեմբերի 29-ին Վ. Ի. Լենինի նախագահությամբ գումարված կառավարական նիստը երրորդ անգամ քննում էր Հայաստանի ինքնորոշման հարցը և Վ. Ի. Լենինի առաջարկով ընդունում Թուրքահայաստանի մասին հանրահայտ դեկրետը, ըստ որի հռչակվում էր Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն, ինչպես նաև՝ «տարբեր երկրներում ցրված գաղթահայերի, ինչպես նաև վտարանդի հայերի անարգել վերադարձը Թուրքահայաստանի սահմանները» և «պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Թուրքիայի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը» Թուրքահայաստանի «սահմաններ»:

Ժողովրդական կոմիսարների սովետը այդ դեկրետով հայ ժողովրդի ազատ հայրենադարձության հարցը դրեց Թուրքիայի կառավարության առջև և հպտարարեց, որ այդ հարցի վրա կպնդի Թուրքիայի հետ հաշտության բանակցություններ վարելիս:

Սովետական կառավարության դեկրետը միաժամանակ նպատակահարմար էր համարում, որ ռուսական զորքերը Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգներից, իսկ թուրքական զորքերը՝ Տիգրանակերտի, Սեբաստիայի և Խարբերդի նահանգներից դուրս բերվեն և հայ ժողովրդին հնարավորություն տրվի, առանց կողմնակի միջամտության, ազատորեն տնօրինելու իր բնիստը, որոշելու իր պետական կառավարման ձևը:

1918 թվականի հունվարին Համառուսաստանյան սովետի 3-րդ համագումարը հավանություն տվեց Հայաստանի ինքնորոշման

մասին սույն դեկրետին և իշխանության բարձրագույն օրգանի իրավասությամբ հաստատեց հայ ժողովրդին տրված մեծ իրավունքը:

Վ. Ի. Լենինի անմիջական առաջարկով և ցուցմունքով հռչակվեցին և իրավականորեն ձևակերպվեցին հայ ժողովրդի ազգային ազատագրման այս մեծ սկզբունքները, որոնք արտահայտում էին մեր ժողովրդի դարավոր բաղձանքները:

Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ստեղծված սովետական երիտասարդ հանրապետությունը հանդիսանում էր հայ ժողովրդի անշահախնդիր դաշնակիցն ու հենարանը:

Մինչև Հայաստանում սովետական իշխանության հաստատումը, 1918—1920 թվականները, կառավարությունը, Վ. Ի. Լենինի ցուցմունքներով, բացառիկ մեծ օգնություն, նյութական լայն աջակցություն էր ցույց տալիս ամբողջ Ռուսաստանով մեկ ցրված կես միլիոն հայ գաղթականներին: Հայ գաղթականների երեխաների համար տարբեր քաղաքներում կազմակերպվում էին որբանոցներ, արհեստանոցներ, դպրոցներ և հիվանդանոցներ:

Վ. Ի. Լենինը 1920 թվականի նոյեմբերի 29-ին առաջինը ողջունում էր «իմպերիալիզմի ճնշումից ազատագրված, աշխատավորական, Սովետական Հայաստանը»:

«Հոկտեմբերյան հեղափոխությունը,—գրում էր Ավետիք Իսահակյանը 1957 թվականին,—իրականացրեց հայ ժողովրդի «Սասունցի Դավիթ» էպոսի դարերի ցանկությունը, «խորտակել աշխարհը և նորից շինել», և նոր շինված մարդկանց աշխարհում հայ ժողովուրդը ձեռք բերեց վաղուց կորցրած պետականությունը, ազգային և համամարդկային մշակույթի զարգացման ազատություն և հավերժական եղբայրություն ուս ժողովրդի և մյուս ժողովուրդների հետ»:

Այս տարի, Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակից հետո, նոյեմբերին, մեր ժողովուրդը նշելու է նաև իր ազգային վերածննդյան, պետականության հաստատման 50-ամյակը, Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի 50 տարին:

Անցնող 50 տարիները եղան հայրենական վերաշինության և հայ մշակույթի ծաղկման, մեր ժողովրդի հոգևոր, ազգային և պետական միասնության ամրապնդման տարիներ: Ավերակ երկիրը մեր կանգնեց ազգային-հոգևոր վերածննդյան փրկարար և լուսավոր ճանապարհի վրա: Սովետական Հայաստանը ծնունդ է Հոկտեմբերի, որի ազատարար այգը, որպես օրհնություն և բա-

յիք, բացվեց հայոց աշխարհի վրա:

Այսօր ապրում և ստեղծագործում է հաժողովուրդը իր հայրենիքում, արևախանժայռերից կյանք, լույս և փառք քաղելով:

Երբեմնի ավերակների վրա նստած «Բայ Հայաստանը» վեր է խոյացել կյանքի մոր արտառույշ, հավերժական ձևերի մեջ առնական, վսեմ ու նվիրական:

Արդի Հայաստանն է հայ ժողովրդի և բազմերի, ազգային իդների միակ ու շուտվոր հանգրվանը, մեր ավետաց երկիրը, երաշխիքը՝ մեր ապագա երազների, նվաճումների և գոյության, պաշտպանն ու ղեկավարողը՝ հայ մշակույթի:


1946 թվականին սովետական կառավարության մարդասիրական որոշումով և հայրենի իշխանության նախաձեռնությամբ ըսկսվում էր հայրենադարձության մեծ ու պատմական շարժումը, որը բախտորոշ նշանակություն ունեցավ մայր հայրենիքի ու բովանդակ հայ ժողովրդի կյանքի և ապագայի համար:

Մայր հայրենիքը բացում էր մայրական իր գիրկը սփյուռքի տարագիր և պանդուխտ իր զավակների առաջ. շուրջ 200.000 հայրենադարձներ մի անգամ ընդմիջտ թոթափում էին օտարության և պանդխտության փոշի իրենց ոտքերից և վերածնված հայրենի հողում վերակերտում իրենց քանդված բույնը ապահով ու խաղաղ, բարօր ու երջանիկ ապրելու հայրենի պետականության հովանու ներքո:

Համաժողովրդական-պետական այս տոնի բերկրալի առիթով, հայ ժողովուրդը անկեղծ հարգանքի, խորը երախտագիտության արտազին խոսք ունի իր ճշմարիտ ու մեքարեկամի՝ սովետական պետության հիմնադիր Վ. Ի. Լենինի հիշատակին և ուսեղբայրական ժողովրդին, որի հետ կնքել հավերժական բարեկամության անխախդաշինքը:

Մեր պատմության և մեր ազգային վերածննդյան այս բախտորոշ հանգրվանին Մայր Աթոռ ս. Էջմիածինը ևս, որ ապրում մեր օրերի իր հոգևոր, եկեղեցական, շինարարական զարթոնքը ստեղծված պետական օրինական ու գործնական պայմաններում հավասարաբն իր պատմական դերին ու առաքելության, կշարունակի սրբությամբ կատարել իր հոգևոր և իր հայրենասիրական առաքելությունը իր ժողովրդի ծոցում:

Թող օրհնվի հավետ, պահվի ու պահպանվի Նախախնամության Աջով ու հայ ժողովրդի բազուկներով ու շնորհներով «արեւելեան կողմն աշխարհիս, Հայրապետութիւն և Հանրապետութիւն հայոց»:



ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆ
ԸՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԻ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԹԻՎ

Վեհափառ Հայրապետի 1970 թվականի գատկական շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են քույր եկեղեցիների հոգևոր պետերի՝ Զատկի աթոյվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության արտագին ոգին քույր եկեղեցիների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորանքների համար հետևյալ հոգևոր պետերից.

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու քահանայապետ, Նորին Սրբություն
ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական պատրիարք, Նորին Սրբություն
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի պատրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻԻՆ (Մոսկվա),

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի պատրիարք, Նորին Սրբություն
ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ - ԻՆ (Ալեքսանդրիա),

Ղատի ուղղափառ եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
Ա. Բ. ՈՒՆԱ. ԿՅՈՒՐԵՂ. Զ - ԻՆ (Ալեքսանդրիա),

Երուսաղեմի հունաց պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻՆ (Երուսաղեմ),

Անտիոքի և համայն Արևելքի պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԴՈՍԻՈՍ. Զ - ԻՆ (Դամասկոս),

Անտիոքի և համայն Արևելքի պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄՈՍ. Ե - ԻՆ (Բելլուք),

Անտիոքի սիրիական կաթոլիկ եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ. Ա. ՀԱՅԵԿ. Բ - ԻՆ (Բելլուք),

Սիրիական օրթոդոքս եկեղեցու և համայն Արևելքի պատրիարք,
Նորին Սրբություն. ԻԳՆԱՏԻՈՍ. ՀԱԿՈԲ. Գ - ԻՆ (Դամասկոս),

Համայն Եթովպիայի պատրիարք, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (Ադիս-Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ. ՈՒԿԵՆ. Ա - ԻՆ (Քոթայամ),

Համայն Վրաց պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԵՓՐԵՄ. Բ - ԻՆ (Թբիլիսի),

Ռումին օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),

Բուլղար օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
ԿԻՐԻԼԻՆ (Սոֆիա),

Լիբանանի մարոնիտ պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ. ԶԻԱԴԵԻՆ (Բելլուք),

Քենտրբերիի արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Սրբություն դոկտ. ՄԱՅՔԼ. ՌԵՄՋԻՆԻՆ
(Լոնդոն),

Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
ՀԵՐՈՆԻՄՈՍԻՆ (Աթենք),

Սերբիայի և համայն Հարավսլավիայի պատրիարք, Նորին Սրբություն
ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),

Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
ՍՏԵՖԱՆԻՆ (Վարշավա),

Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
ԴՈՐՈՖԵՅԻՆ (Պրագա),

Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք, Նորին Ամենապատվություն
ԻԳՆԱՏԻՈՍ. ՊԵՏՐՈՍ. ԺԶ. ՊԱԹԱՆՅԱՆԻՆ (Բելլուք),

Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Սրբություն
ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոզիա),

Նորին Ամենապատվություն կարդինալ

Ա Ղ Ա Ջ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Վատիկան),

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար

դոկտ. Է. Բ Լ Ե Յ Կ Ի Ն (Ժնև),

Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոսական եկեղեցու առաջնորդ

Լ Ո Ր Ի Ս Տ Ո Ն Լ Ե Վ Ի Ն Գ Ս Տ Ո Ն Ս Ք Ե Յ Ֆ եպիսկոպոսին
(Նյու-Յորք),

Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն

կարդինալ Ֆ Ր Ա Ն Յ Գ Յ Ո Ն Ի Գ Ի Ն (Վիեննա),

Լատվիական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու արքեպիսկոպոս,

Նորին Սրբազնություն Յ. Պ. Մ Ա Տ Ո Ի Լ Ի Ս Ի Ն (Ռիգա),

Հստոնական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու արքեպիսկոպոս,

Նորին Սրբազնություն Ա Լ Ֆ Բ Ե Գ Տ Ո Ո Մ Ի Ն Գ Ի Ն (Տալլին),

Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,

Վերապատվելի Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս Ա Հ Ա Ր Ո Ն Յ Ա Ն Ի Ն
(Բեյրութ),

Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ

Ն. Է Ր Մ Ի Ն Ի Ո Ռ Ո Ն Կ Ա Ր Ի Ի Ն (Երուսաղեմ),

ԱՄՆ-ում Քրիստոսի եկեղեցիների ազգային խորհրդի ընդհանուր քարտու-

ղար, Գերապատիվ հայր Է Ր Ո Ի Ի Ն Է Ս Փ Ի Ի Ն (Նյու-Յորք),

Մոնակոյի եպիսկոպոս, Գերաշնորհ Ժ Ա Ն Ռ Յ Ո Ի Պ Ի Ն (Մոնակո),

Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապալծառ հայր

Հ Մ Ա Յ Ա Կ վարդապետ Կ Ե Տ Ի Կ Յ Ա Ն Ի Ն (Վենետիկ),

Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապալծառ հայր

Մ Ե Ս Ր Ո Պ վարդապետ Հ Ա Պ Ո Ջ Յ Ա Ն Ի Ն (Վիեննա),

Վերապատվելի Հ Ա Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Հ Ե Լ Վ Ա Ճ Յ Ա Ն Ի Ն (Մարսել):





ՓԻԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌԻ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԻ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԹԻՎ

Վեհափառ Հայրապետի 1970 թվականի գաղական շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են մեր նվիրապետական Աթոռների գահակալների և թեմակալ առաջնորդների՝ Զատիկի առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ:

Այս առթիվ հանուն Հայոց Հայրապետի սրտագին շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորանքների համար՝

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ

Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),

ԵՐՈՒՍԱԿԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ

Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),

ԹՈՒՐԻՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ

Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),


ԲԱՐԵՆՆԱՄ ԲՈՂՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԳՆԵՐԻՆ

ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

*
* *

Նմանօրինակ պատասխան շնորհավորական գրությունների կապակցությամբ Վեհափառ Հայրապետի շնորհակալությունն ենք հայտնում նաև թեմական և կենտրոնական վարչությանը և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչությանը (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալությանը (Լիսաբոն), Աբգարյան ավանդի և ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), ս. Էջմիածնի հանձնախմբին (Բելյուր), Վարդանանց ասպետներին (Ուտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա.-ը, պատասխանելով Նորին Սրբություն Պապի 26 սեպտեմբեր 1969 թվակիր եղբայրական սիրո նամակին, այցելություն պիտի տա Հռոմ, սույն տարվո մայիսի 8—12-ը, որից հետո պիտի շարունակի Իր հայրապետական ուղևորությունը Միլանո և Ֆրանսիա, Իր օրհնությունը տանելու հալ հավատացյալ Իր գավակներին:

Ս. Տ. Վազգեն կաթողիկոսի այցը Հռոմ պատմական առաջին հանդիպումն է հռոմեական-կաթողիկե Սրբազան Քահանայապետի և Հայաստանյայց առաքելական եկեղեցու գերագույն Պետի հետ, որը կոչված է մի կարեւոր հանգրվան հանդիսանալ միջեկեղեցական աստվածահաճո գործակցության ճանապարհի վրա:

Հռոմ այցելության, Վեհափառ Հայրապետին պիտի ուղեկցեն՝ Երուսաղեմի հայոց պատրիարք տ. Եղիշե արքեպ. Տերտերյանը, Թուրքիայի հայոց պատրիարք տ. Շնորհք արքեպ. Գալստյանը, ինչպես և հայրապետական պատվիրակներ՝ Հայաստանից՝ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, Արևմտյան Եվրոպայից՝ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Անգլիայից՝ տ. Պսակ արքեպ. Թումայանը, Հյուսիսային Ամերիկայից՝ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, Հարավային Ամերիկայից՝ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը, և Միլանոյի հայոց հովիվ տ. Զգոն եպս. Տեր-Հակոբյանը, նաև՝ գավազանակիր Նարեկ վրդ. Ծաքարյանը և Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների բաժնի քարտուղար Պարգև Ծահրազյանը:

Ամենայն Հայոց Հայրապետի վերադարձը Մայր Աթոռ նախատեսվում է հունիս ամսի 15-ի շուրջ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Մարտ 1970 թ.,

Ս. Էջմիածին





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Մարտի 29-ին՝ կիրակի.—Զատիկ։ Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այս տոնական ու հանդիսավոր օրվա խորհուրդն իրեն է ձգել ուխտավորների մի հոծ բազմություն:

Օրը գարնանային է, ջերմ ու պայծառ:

Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով ու ամպհովանու տակ, «Հրաշափառ» շարականի երգեցողությամբ, առաջնորդվում է Մայր տաճար՝ զատկական հայրապետական սուրբ պատարագը մատուցելու:

Մայր տաճարի աջակողմյան դասում տեղ են գրավել Գերագույն հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունն ու սփյուռքահայ հավատացյալներ:

Ս. պատարագին ներկա էին նաև հյուրաբար Երևանում գտնվող Հոյակոխայի Մրկըրտչական համալսարանի միության նախագահ պատուիր Մոստրիտ Վինգհատենը, Բեերդա քաղաքի քաղաքագլուխ Է. Դր Հասնը, Մոսկվայից՝ Մկրտչական համալսարանի արտաքին բաժնի վարիչ Ստոյան և Երևանի հայ ավետարանական համայնքի հոգևոր հովիվ վերապատվելի Սարգիս Կոնստույանը, համայնքի ղեկավար մարմինների ներկայացուցիչների հետ:

Սուրբ պատարագի երգեցողությունը հաջողությամբ կատարում է Մայր տաճարի երգեցիկ խումբը:

Վեհ ու հաղթական են հնչում Հարության տաղերը՝ «Քրիստոս յարեալ ի մեռելոց» և «Գովեա Երուսաղէմ, գՏէր»:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը, գիշերվա ժամը 24-ին, Երեւանից ձայնասփովում է Վեհափառ Հայրապետի զատկական քարոզն ու հատվածներ՝ պատարագից: Հայրապետական քարոզը տպվել է «Էջմիածին» ամսագրի Գ համարում (էջ 14):


Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը նույն հանդիսավորությամբ առաջնորդվում է Վեհարան՝ զահարահ, ուր ընդունում է շնորհավորություններ:

Հանուն հայ հավատացյալ ժողովրդի և հայ եկեղեցու ողջ լրության, Մայր Աթոռի միաբանության և բոլոր ներկաների, Հայոց Հայրապետի Զատիկը շնորհավորում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝ Մայր Աթոռի հաստատության, պայծառության և Վեհափառ Հայրապետի կենաց արևշատության սրտագին բարեմատություններով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը ներկա բազմությանը ավետում է Փրկչի հրաշափառ ս. Հարությունը, օրհնում ազգն ու եկեղեցին, ժողովուրդն ու հայրենիքը, բարեմատություններ է անում Մայր Աթոռ ս. Էջմիածնի անասանության, մեր նվիրապետական Աթոռների պայծառության և համայն աշխարհի խաղաղության համար:

Բոլոր ներկաները աջահամբույրով շնորհավորում են Վեհափառ Հայրապետի Զատիկը:

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է զատկական տոնի հանդիսությունը Մայր Աթոռում:





ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ

Ապրիլի 5-ին, կիրակի.—Կրկնագատիկ.
Նոր կիրակիէ.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց
տ. Գևորգ վրդ. Սերապարյանը: Տաճարը
լիքն էր սփյուռքահայ և օտար ուխտավորների
ըով և հավատացյալներով:

Հավարտ ս. պատարագի քարոզեց Վեհա-
փառ Հայրապետը՝ «Երանի որ հալածեալ ի-
ցեն վասն արդարութեան, զի նոցա է արքա-
յութիւն երկնից» բնաբանով: Իր քարոզում
Վեհափառ Հայրապետը ողբելոյեց հիշատակը
առաջին և երկրորդ համաշխարհային պա-
տերազմներում զոհված մեր բլուրավոր նա-
ստակների, որոնք ընկան «վասն Յիսուսի և
վասն հայրենեաց» անհավասար մարտում՝
հանուն արդարութեան և իրավունքի:

Վեհափառ Հայրապետը իր քարոզի մեջ ո-
ղբելոյեց նաև հիշատակը 1920—1921 թվա-
կաններին (ապրիլին) Այնթապի հերոսա-
մարտում նահատակված հայ բաջերի անմահ
հիշատակը՝ հերոսամարտի հիմնամասիկի
առթիւ:

Այնուհետև, ՀՍՍՀ Գիտութիւնների ալա-
ղծմիայի ակադեմիկոս Կարո Մելիք-Օհան-
ջանյանի մահվան քառասունքի առթիւ Վե-
հափառ Հայրապետը խոսեց նրա մատուցած
մեծ ծառայութիւնների մասին հայ մշակույ-
թի զարգացման գործում և մխիթարութեան
խոսք ուղղեց հանգուցյալի զստեր և հարա-
զատներին, որոնք ներկա էին ս. պատարա-
գին և հոգեհանգստյան արարողութեանը:

Իր քարոզի մեջ Վեհափառ Հայրապետը
խոսեց նաև տ. Գնել ավագ քահանա Ման-
սույանի մասին, որպէս հավատավոր, հայ-
րենասեր մի հոգեւորականի, որը սուրբ թվա-
կանի մարտի 31-ին վախճանվել է Սուշավա
քաղաքում:

Ապա Վեհափառ Հայրապետի նախագա-
հութեամբ և Մայր Աթոռի ողջ միաբանութեան
մասնակցութեամբ կատարվեց պաշտոնական
հոգեհանգիստ:

Ս. պատարագի արարողութեանը և հոգե-
հանգստյան պաշտոնի կատարմանը ներկա
էր, որպէս տուրիստ, Հայաստանում գրտ-
նըվող Բելգիայի Անվեր քաղաքի ս. Իգնա-
տիոս և Բրյուսելի ս. Ալեյսիոս բարձրագույն
առևտրական ինստիտուտների կաթողիկ
դասախոսների և ուսանողների խում-
բը՝ շուրջ 40 հոգի: Հյուրերը պատարագից
հետո այցելեցին Մայր Աթոռի թանգարանը,
զիտեցին Մայր տաճարի շրջափակի հուշար-
ձանները:

Այնուհետև Վեհաբանի ղահլիճում բելգիա-
ցի հյուրերին ընդունեց Վեհափառ Հայրապե-
տը և բարի գալուստ մաղթեց նրանց:

Ապա ողջ խմբի անունից շնորհակալութեան
և երախտագիտութեան հետևյալ խոսքն ասաց
պրոֆ. Ռոբերտ Պուրվուալորը.

«Ձերդ Սրբութիւնը բարեհաճեց պատվել և
ընդունելութեան արժանացնել ս. Իգնատիոսի
(Անվեր) համալսարանական ճյուղերի և ս.
Ալեյսիոսի (Բրյուսել) բարձրագույն առևտր-
ական հաստատութեան դասախոսներին և
նախկին ուսանողներին: Թող ինձ թույլ տրվի
նրանց անունից խոնարհաբար շնորհակալու-
թիւն հայտնել այս բացառիկ պատվի հա-
մար, որը բարձր է զնահատվում հատկա-
պէս, որովհետև տրվում է Հայաստանի այս
հին ու պատկառելի եկեղեցու նորին Սրբու-
թիւն կաթողիկոսի կողմից: Թույլ եմ տալիս
ինձ, Ձերդ Սրբութեան ներկայութեան, հայտ-
նելու այն խոր զգացումը, որ մատուցում ենք
բոլորս այս հյուրընկալութեան համար, որը
մեզ եղբայրորեն և քրիստոնեաբար մոտեց-
նում է ի Տեր»:

Խմբի ղեկավարներն էին՝ պրոֆ. Պուր-
վուալորը և Բելգո-Սովետական բարեկամու-
թեան ընկերութեան նախագահ Ս. Բեյենս
Մորտոն:

Հայոց Հայրապետի և հարգելի հյուրերի
միջև տեղի ունեցավ սրտագին զրույց, էկու-
մենիկ ոգով:

Ընդունելության ավարտին բոլոր ներկաները ծնրադիր ստացան Հայոց Հայրապետի օրհնությունը:

Նույն օրը, երեկոյան ժամը 7-ին, հոգևոր ճեմարանի դահլիճում բանախոսեց ճեմարանի ավագ դասախոս պրն. Գրիգոր Գյուլյանը՝ նյութ ունենալով «Ժաննա դ'Արկի կյանքն ու գործունեությունը»:

Ապրիլի 7-ին, երեքշաբթի.— Աւետումն՝ Ս. Աստուածածնի.

Մայր տաճարում, Իջման ս. սեղանի վրա, պատարագեց տ. Հակոբ քհն. Հակոբյանը: Ս. պատարագի երգեցողությունը կատարեցին հոգևոր ճեմարանի լսարանական բաժնի ուսանողները:

Ապրիլի 10-ին, ուրբաթ.— Այսօր երեկոյան ժամը 19-ին Վեհարանում տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Ապրիլի 14-ին, երեքշաբթի.— Այսօր երեկոյան հոգևոր ճեմարանի դահլիճում ուսանողության համար դասախոսություն կարդաց վերապատվելի Սարգիս Կոնսյուլյանը՝ նյութ ունենալով «Գործնական թելադրություններ նկարագրի կազմության համար»:

Ապրիլի 19-ին, կիրակի.— Կարմիր Կիրաւիէ.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նկեղեցին լիքն էր հավատացյալ ժողովրդով: Ներկա էր նաև սփյուռքահայ ուխտավորների մի խումբ, որոնց թվում՝ «Նաիրի» թերթի խմբագիր պրն. Անդրանիկ Ծառուկյանը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ հոգեհանգիստ՝ Մայր Աթոռի միաբան, հանգուցյալ տ. Սահակ արքեպ. Տեր-Հովհաննիսյանի հիշատակի համար:

Ս. պատարագի երգեցողությունը կատարվեց՝ Մայր տաճարում աւաջին անգամ, վերջերս, Պրազայից ժամանած շեխ մաւնաբետարհնատավորների կողմից տեղադրված մեծ երգեհոնի գուգակցությամբ:

Ապրիլի 24-ին, ուրբաթ.— Յիշատակ բիւրաւուր նահատակացն մեռոց, որք կատարեցան յընթացս համաշխարհային առաջնապետերազմի.

Մայր տաճարում, ս. Ստեփանոսի նահատակաց սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց տ. Նշան քհն. Բեկլերյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հայկազոարքեպ. Աբրահամյանը՝ ոգեկոչելով հիշատակը Ապրիլյան եղեռնի մեր բլուրավոր նահատակների:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը, որ ներկա էր ս. պատարագի արարողությանը, եկեղեցական թափորով առանդովեց մայրավանքի շրջափակում գտնվող Ապրիլյան եղեռնի նահատակաց հուշարձանը և ուր նախագահեց հոգեհանգստյան մասնավոր արարողությանը:

Ապրիլի 25-ին, շաբաթ.— Ս. Զատիկի տոն (հին տոմարով) հանդիսությանց մասնակցելու համար Մոսկվա մեկնեց Արարատ սրբալատյանը, Թբիլիսի՝ Հովհաննես սրկ. Գրգչյանը, և Արմավիր՝ Հովսեփ սրկ. Հակոբյանը, որոնք Մայր Աթոռ վերադարձան արիլի 30-ին:

Ապրիլի 26-ին, կիրակի.— Տօն Երեման Լիառի.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսարողությամբ, կատարվեց հոգեհանգիստ՝ տ. Շավարշ եպս. Գույումճյանի հիշատակին, որ վախճանվել էր վերջերս Մոնտեվիդեոյում (Հարավային Ամերիկա):

Ապրիլի 30-ին, հինգշաբթի.— Երեկոյան ժամը 7-ին Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Ժողովից հետո Վեհարանի մեծ դահլիճում ցուցադրվեց 1969 թվականի հոկտեմբերի Մայր Աթոռում տեղի ունեցած եպիսկոպոսա ժողովի, մեռնօրհնության և Վեհափառ Հայրապետի զահակալության հանդիսություններին նվիրված «Էջմիածին» ժապավենը:



Վ. ԳՈՂՈՒԽԱՆՅԱՆ

(Ճարտարապետ)

ԵՐԵՎԱՆԻ ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ


Մեր մայրաքաղաքի Լենինի անվան հրապարակի անսամբլի մասին խորհելիս ակամա հիշվում են ճարտարապետ Ֆ. Լ. Ռաչտի խոսքերը այն մասին, որ «ճարտարապետական ստեղծագործությունը ճշմարիտ է, եթե այն ծնունդ է կյանքի»:

Լենինի անվան հրապարակը ծնվել է մեր իրականության հետ՝ ի հաստատումն մեռ պետականության. այս նշանակության խորը գիտակցումով են մարմնավորել ճարտարապետությունը՝ հրապարակի տաղանդավոր ստեղծողները, և ամենից առաջ՝ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը, որ դեռևս 1924 թվականին նախագծելով նոր Երևանի գլխավոր հատակագիծը, նշեց հրապարակի տեղը՝ հատկացնելով նրան գերիշխող դեր Երևանի քաղաքաշինական կյանքում: Թամանյանը հրապարակի շուրջ ստեղծել է համաքաղաքային կենտրոն և, խորապես գիտակցելով մայրաքաղաքի առանձնահատկությունները, շեշտում է այդ կենտրոնը՝ որպես քաղաքի օրգանիզմի կարևորագույն բաղկացուցիչը, իսկ հրապարակը՝ նրա կառուցվածքային միջուկ, որտեղ միաձուլվում են քաղաքի գլխավոր մայրուղիները: Ճարտարապետը առաջարկում է հրապարակի շուրջ խմբավորել պետական ու հասարա-

կական կառույցներ և դրանով իսկ բարձրացնել հրապարակի վարչա-հասարակական նշանակությունը:

Հրապարակը լայն զբոսալճով կապված է մյուս՝ Ծափումյանի անվան հրապարակի հետ, իսկ հակառակ կողմից (ըստ սկզբնական նախագծի) Հյուսիսային պողոտան պայմանավորում էր կապը թատերական հրապարակի հետ: Ստեղծվում էր հրապարակների ու փողոցների դասավորման հետաքրքիր մի կարգ, որը և հանդիսանում էր նոր Երևանի կառուցվածքային առանցքը:

Քաղաքի կենտրոնի կազմակերպման այս լուծումը եղավ կենսունակ, բռնեց ժամանակի քննությանն ու այսօր լրիվ համապատասխանում է արդի մեծ քաղաքների հասարակական կենտրոնների քաղաշինական պահանջներին: Ամենից առաջ դա հաստատվում է կենտրոնում քաղաքային օրգանիզմի գործառնական ճիշտ կազմակերպմամբ: Այստեղ առկա է Ալ. Թամանյանի հետադիմությունը. ճարտարապետը հավասարաչափ է տեղաբաշխել առևտրական, հանդեսային ու վարչական շենքերը, որով և կարողացել է խուսափել քաղաքի կենտրոնում փոխադրամիջոցների ու մարդկանց (ուղևորների) մեծ կուտակումներից (ժամանակակից բազ-



մաթիվ մեծ քաղաքների թերություններից մեկը): Երևանի կենտրոնում մարդն ազատ է, նա չի նեղվում ավտոմեքենաների հոսքով ու մարդկային զանգվածների կուտակումով:

ու ուղահայաց ջլատումների չափերը, շենքերի բարձրությունների ու հրապարակի առանցքային չափերի հարաբերությունները, ճարտարապետական ծավալների հարաբե-



Երևանի Լենինի անվան հրապարակը (վերակառուցման նախագիծ)

Լենինի անվան հրապարակը ծառայում է իր հիմնական նպատակին՝ լինել վարչական կենտրոն: Այստեղ ընթանում է հանրապետության գործնական ու հասարակական կյանքը. չկան մասնաշաղկապ հանախումների հիմնարկներ. հրապարակը ցույցերի ու շքերթների վայր է, ժողովրդական հավաքատեղի՝ տոնական ու հանդիսավոր այլ օրերին. հրապարակում են հանգստանում երեւանցիները ամառային շոգ երեկոներին, հրապարակում զբոսնում, զուգում նոր տարվա տոնածառ. պսակ դնում մեծ Լենինի արձանին: Եվ այսպես Սովետական Հայաստանի գոյության տասնամյակներ շարունակ:

Քաղաքի զարկերակը, նրա շարժման համաչափությունը սկսվում են հրապարակից: Նրա ճարտարապետությունը, նրա դիրքը քաղաքի հատակագծում, նրա գեղարվեստա-գեղագիտական բարձր հատկանիշները օժանդակում են հրապարակի կոչմանը:

Հրապարակն ունի երկրաչափական ճիշտ հատակագիծ, առանձնանում է կառուցվածքային լուծման հատկությամբ: Ընտրված վիճակում կայունացման համար Ալ. Թամանյանը, քաղաքի հատակագծմանը զուգընթաց, աշխատում էր նաև Կառավարական տան նախագծման վրա, որը շրջագծում էր հրապարակը հյուսիս-արևելյան կողմից:

Եվ այս շենքով կանխորոշվեցին հրապարակի համաչափությունները՝ հորիզոնական


ությունը: Հետագայում, հրապարակի մյուս ծավալները նախագծելիս, ճարտարապետներ Ս. Սաֆարյանին, Մ. Գրիգորյանին, Գ. Թամանյանին, Վ. Արևշատյանին, Էդ. Սարգսյանին, Ն. Փարեմուզյանին, Լ. Վարդանյանին և քանդակագործ Ս. Մերկուրովին հաջողվեց պահպանել կառուցապատման բնույթը, շնորհիվ որի Լենինի անվան հրապարակը դարձել է կոտ, ճարտարապետական կատարյալ անսամբլ, որտեղ համաչափությունների համապատասխանությունը բացառում է ճարտարապետական այս կամ այն ծավալի գերիշխումը և հրապարակի ողջ ճարտարապետությունը պահում է հավասարակշռության մեջ:

Հատկանշական է նաև հրապարակում «Արարատ» տրեստի վարչական շենքի (Ս. Սաֆարյան, Վ. Արևշատյան), «Արմենիա» հյուրանոցի, պատմական թանգարանի, Միությունների տան ու կապի մինիստրության շենքերի (Մ. Գրիգորյան, Էդ. Սարգսյան) դասավորությունը, նրանց ծավալների ու ձևերի բնույթը, համաչափությունը, որ արդյունք են հրապարակի ամբողջական լուծման անսամբլայնության ձգտման: Հրապարակի շենքերի ճարտարապետությունը ամենայն հիմնովն է արժանի նաև մանրամասներում. խորը կամարային անցումները Կառավարական տան ու «Արարատ» տրեստի աշտարակների տակ, յուրատեսակ

կառուցվածքային տարածականություն են ստեղծում: Անսամբլի ճարտարապետական գործերը համախմբված են համաչափությամբ, գույնով ու ներդաշնակությամբ, բնդհանուր կենսահաստատ, հանդիսավոր բնույթով:

Փարենուզյան և Լ. Վարդանյան, քանդակագործ՝ Ս. Մերկուրով):

Ժամանակին վիճելի էր հուշարձանի տեղադրման վայրը. շատերը առաջարկում էին հուշարձանը կառուցել հրապարակի հակառակ կողմում՝ պատճառաբանելով՝ հրապարակի թեքությունը (հրապարակը դեպի հարավ ունի ոչ մեծ թեքություն) և ենթադրելով արձանի տեսանելիության համար ավելի հարմար դիրք:



Երևան Կառավարական շենքը

Հրապարակում մարդը հավաք է, կազմակերպված. ճարտարապետական-գեղարվեստական միջոցներով ձեռք բերված հավասարակշռությունը, շենքերի, հրապարակի ու մարդու մասշտաբային հարաբերությունը խոսում է հոգուտ մարդու, իսկ օդի, լույսի, գույների ու ջրի առատությունը, հատակագծային պարզ լուծումը արագ կողմնորոշում են մարդուն: Հրապարակից քաղաքի հեռանկարային ու տարածական ընկալման շնորհիվ կարելի է ոչ միայն տեսնել, այլև զգալ քաղաքի, հրապարակից այս կամ այն կողմ տարածված յուրաքանչյուր շրջանի բնույթը, հրապարակ մտնող յուրաքանչյուր փողոցի բնույթը:

Հրապարակի անսամբլում առանձնահատուկ դեր ունի Վ. Ի. Լենինի հուշարձանը, որ երկնքի կապույտ ֆոնի վրա, հարավից ջլատում է հրապարակի հորիզոնական տեսադաշտը՝ արձանի ու պատվանդանի իր միաձուլ ծավալով (ճարտարապետներ՝ Ն.

րակի թեքությունը (հրապարակը դեպի հարավ ունի ոչ մեծ թեքություն) և ենթադրելով արձանի տեսանելիության համար ավելի հարմար դիրք:

Սակայն հարկ է նշել հուշարձանի տեղի հատկապես լավ ընտրությունը՝ նախատեսված դեռևս Ալ. Թամանյանի կողմից:

Հուշարձանը կառուցված է հրապարակի փոքր առանցքով և, լինելով միանգամայն կատարյալ գործ իր ճարտարապետական-քանդակային լուծմամբ, դարձել է հրապարակի ճարտարապետական անսամբլի բաղկացուցիչը (պատվանդանը լուծված է նաև որպես ամբիոն՝ շքերթների ու հանդեսների անցկացման համար):

Հրապարակի հյուսիսային կողմում կառուցված է շատրվան՝ իր ջրավազանով, որի հայելանման մակերևույթը անդրադարձնելով շենքերի սպիտակն ու վարդագույնը, կենդանացնում և հարստացնում է հրապարակի գունային ընդհանուր պատկերը:

Հրապարակը դիտողի աչքի առջև բացվում են տարբեր տեսարաններ՝ իրենց ճարտարապետական ինքնուրույն լուծումներով: Այսուհանդերձ, Լենինի անվան հրապարակը կուռ ու ամբողջական մի անսամբլ է, և այդ

րապետական թեմա: Նրանք զգուշությամբ ու հարգանքով մոտեցան իրենց նախորդի սկսած գործին՝ գիտակցելով նրա բարձրարվեստ ճարտարապետության արժանիքները և գաղափարների կենսունակությունը: Եր-



Երևան. մի դրվագ Կառավարական շենքից

ամբողջականությունը չի խախտվում նույնիսկ հրապարակը խաչաձևող երթևեկության հոսանքներով, ընդհակառակն՝ վերջիններս օրգանական մասն են կազմում այդ ամբողջականության:

Հրապարակի գեղարվեստական արտահայտչականությանը մեծապես նպաստող մի հանգամանք ևս. քարի վրա քանդակագործելու մեր դարավոր արվեստի վերահաստատումն է դա, Ալ. Թամանյանի կողմից: Դեկորատիվ քանդակը մեր օրերում առաջին անգամ օգտագործվելով Կառավարական տան շենքի վրա, իր մնայուն տեղն ունեցավ մեր ճարտարապետական հետագա գործունեությունում: Հետագայում, հրապարակում իրականացված կառույցների հեղինակները ունենալով լավագույն օրինակ Ալ. Թամանյանի գործերը, կարողացան իրենց ստեղծագործություններով դառնալ հրապարակի ճարտարապետական անսամբլի ամբողջականության ստեղծողներ. կարողացան պահպանել մի ընդհանուր, աղաջատար ճարտա-

բեմն նույնիսկ նրանք թեքվեցին իրենց անձնական հեղինակային հետաքրքրություններին՝ հանուն անսամբլայնության, հանուն ընդհանուր գաղափարի:

Հրապարակն ունի ընդհանուր համաչափության միավոր (մոդուլ)՝ թելադրված Կառավարական տան ճարտարապետական ձևվերով: Հրապարակի անսամբլային ճարտարապետության ներդաշնակ ընդհանրությունը պահպանված է նաև սյունաշարային (օրդեր) համակարգով, որ երևան է գալիս Կառավարական տան, «Արարատ» տրեստի ու հյուրանոցի ճարտարապետություններում. և չնայած սյունաշարի (օրդեր) երեք տարբեր մեկնաբանմանը, ճարտարապետների մեկնակետը նույնն է՝ ազգային ճարտարապետությունը:

Ալ. Թամանյանն իր ստեղծագործություններում (Կառավարական տուն) նորովի է մեկնաբանում սյունաշարը (օրդեր)՝ օգտվելով Տեկորի տաճարի ընձեռած հարուստ հնարավորություններից. Կառավարական




տան ճարտարապետությունում պլանաշարն (օրդեր) ունի նոր հնչեղություն, որ ներկայացված է երկու ձգված պլաներով ու նրանց մեջ ներգծված եռանիստ խորշով, որ պասկված են նուրբ զարդաքանդակված խոշակով:

Հրապարակի ճարտարապետության մեջ առկա են օրգանապես միաձուլ երկու սկզբունք՝ դասական-ազգայինն ու ժամանակակիցը: Սա հիրավի օրինակելի մոտեցում է՝ մտածված ու ստեղծագործաբար վերարտադրված ազգային կառուցողական արվեստի ժառանգությանը, երբ մեր հուշարձանների ծանոթ գեղարվեստական հնարքներն օգտագործվել ու նոր, ժամանակակից մեկնաբանում են ստացել:

Մի առիթով Թամանյանը գրել է, որ իր գործերում ինքը ձգտել է օգտագործել մեր մշակութային ժառանգությունն ու նրա ընձեռած հնարավորությունները՝ նորովի: Այս սրբազան ձգտման արտահայտությունն է Կառավարական տունը Երևանի կենտրոնական հրապարակում, իսկ ճարտարապետներ Ս. Սաֆարյանի, Մ. Գրիգորյանի, Գ. Թամանյանի, Վ. Արևշատյանի ու Էդ. Սարապյանի ստեղծագործությունները նույն հրապարակում լավագույն աչակցությունն են աչդ մեծ գործի վերջնական իրականացման:

Վ. Ի. Լենինի անվան հրապարակը կա և կմնա Հայաստանի ու նրա մայրաքաղաք Երևանի ծնունդն ու բարգավաճումը հավերժացնող խորհրդանիշ:





ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՅ

Հայերը մեծ կարևորությամբ ու սրտագին ոգևորությամբ են վերաբերվում դեպի իրենց տաճարներն ու վանքերը՝ որպես ժողովրդի պատմության բնորոշ հատկանիշների, որպես սրբավայրերի, իսկ կենդանի հայ եկեղեցին, որպես մի անգնահատելի միջոց, միացնում է Սովետական Հայաստանը աշխարհով մեկ ցրված հայերին՝ Արարատի մյուս կողմում՝ Թուրքիայում գտնվող հայ եկեղեցիների, Իրանի և Արևմտյան Եվրոպայի թեմերի, զույգ Ամերիկաների, Ասիայի, Ավստրալիայի և Աֆրիկայի թեմերի հետ։ Հայերը մեծ կապվածություն են ցուցաբերում իրենց կրոնի նկատմամբ։ Այդ կապը առավել ևս սերտ է և իրական Երևանի հետ, այդ միությունը գործնական է հատկապես, բարերար և հավերժական։

Հայոց կաթողիկոսը աշխարհասփյուռ հայերի կողմից ընտրվում է համաժողովրդական քվեարկությամբ։ Այդ ընտրությանը մասնակցում են ոչ միայն Հայաստանում

ապրող հայերն ու հոգևորականները, այլև ասփյուռքի բոլոր պատվավոր հայերը իրենց պատգամավորների միջոցով։ Կաթողիկոսի մշտական բնակության վայրն է Էջմիածինը։ Այժմյան կաթողիկոսը Վազգեն Ա-ն է՝ ծնունդով Ռումինիայից։

Էջմիածինը արդյունաբերացվող քաղաք է։ Այն 20 կմ հեռավորության վրա է գտնվում Երևանից։ Քաղաքի չորս կողմերում կան չորս սրբավայրեր, որոնք կարծես պահպաններ լինեն քաղաքին։ Էջմիածինը մեր թվագրության սկզբին հայոց թագավորների մայրաքաղաքն է եղել՝ երբեմն ընդվզելով և երբեմն ենթարկվելով Հռոմին։ Երկրորդ դարում այս քաղաքում վեր խոյացան բազմաթիվ պալատներ և սրբավայրեր, որով և Էջմիածինը դարձավ Հայաստանի կրոնական կենտրոնը։ Հայաստանը որպես պետություն Հռոմից էլ առաջ, երրորդ հարյուրամյակում, քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն։ Այդ հարյուրամյակից սկսած Էջմիածինը դառնում է նաև հայոց եկեղեցու և կաթողիկոսության կենտրոնը։

Այս վատիկանը չի պաշտպանվում ոչ մի զորքով, և ոչ էլ բրոնզյա դարբասներ նրան պարսպով անջատում են աշխարհից։ Յուրաքանչյուրը կարող է զբոսնել այգում, կարող է մտնել սրբավայր, տեսնել եկեղեցական արվեստի գանձերը՝ հայ հավատի սրբազան իրերը՝ սրբանոթներ, պատկերներ, աչեք, մասունքներ և այլն։

ԾՆԹ.—Քաղվածաբար մեր ընթերցողներին ենք ներկայացնում լեհական «Քաղաքականություն» ամսագրի 1970 թ. հունվարի 3-ի համարից՝ Կազիմիր Կոմինսկու «Թղթակցություն Հայաստանից» հուշագրության՝ ս. Էջմիածնի մասին նրա տպավորություններից։

Հեղինակը Մայր Աթոռ է այցելել 1969 թ. հոկտեմբերին՝ մեր եկեղեցական հանդիսությունների ժամանակ։


Խորանի առաջ ծնրադիր է կինը՝ անտարբեր զբոսաշրջիկների աղմուկին, որով լցված է տաճարը: Հիասթափ շուրջառով մորուքավոր հոգևորականը մկրտության պահին աղոթք է կարդում երկու տարեկան մի տղայի վրա՝ նրան ուղեկցող երեք կանանց ներկայությամբ:


Սեծ խմբերով գալիս են աշխարհականները, հիանում Մայր տաճարի հնագույն կառուցողական արվեստով, տաճար, որը 15 դարերի ընթացքում բազմաթիվ վերափոխումների է ենթարկվել դասական հայ ճարտարապետության ոճով:

Էջմիածնի տաճարը ոչ լեհական կաթոլիկ եկեղեցի է և ոչ էլ ռուսական: Արդյո՞ք Էջմիածնի տաճարը իր գունագեղությամբ և կառուցվածքով նման է այն եկեղեցուն, որը ես երբևէ տեսել եմ Ստամբուլում: Ոչ, սա բյուզանդական էլ չէ: Այս ոչ մեծ եկեղեցիները, այս ոչ մեծ վանքերը՝ կառուցված են համապատասխան ժողովրդի հավատքին: Դրանք իրենց զորությամբ չեն ձևում հավատացյալներին, որոնք դարերով ծարավի են եղել այդ սրբություններին և դարերով կուսցած աղոթել են շրթունքների մրմունջով:

Կաթողիկոսական պալատի, տաճարի և հոգևոր ճեմարանի միջև քայլում է հոգևորականը: Այսօր նրանք ավելի շատ են, քան սովորաբար: Սքեմ հազած մորուքավոր հեղեղորականները խոսում են միմյանց հետ հոգևոր կյանքից: Կրում են վեղարներ, որոնք մեծ խորհրդավորություն են տալիս նրանց:

Տոնական համագումար է հայոց կաթողիկոսարանում: Հոգևորականներից յուրաքանչյուրը կրում է բորոցով ամրացրած մի կրծքանշան՝ հետևյալ մակագրությամբ. հայկական եկեղեցի՝ Նյու-Յորք, հայկական եկեղեցի՝ Փարիզ: Նրանք, որպես պատգամավորներ, եկել են Կանադայից, ԱՄՆ-ից, Մեքսիկայից, Բուլղարիայից, Իրանից, Անգլիայից, Ավստրալիայից, Եգիպտոսից և Հնդկաստանից, համարյա բոլոր հայկական թեմերից: Հոգևորականների հետ եկել են բազմաթիվ հայ հավատացյալներ, որոնք ամբողջովին հիացմունքի մեջ են արարողության պահին: Նրանք բոլորը երջանիկ են իրենց նախնիների հողի հետ շփվելով: Նրանց համար դա կրկնակի տոն է՝ ժողովրդական-հայրենասիրական և կրոնական:





ՅՈՒ. Ա. ԹԱՄԱՆՅԱՆ

(Ծարտարապետ)

ԲԶՆԻԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

Ծարտարապետական և պատմական հուշարձաններով հարուստ Հրազդանի շրջանը, իր անկրկնելի դասական կոթողներով, միշտ գրավել է մասնագետների ուշադրությունը: Նշանավոր են Ծաղկաձորի Կեչառիսի վանքը, Բջնիի, Արգականի Նեղուցի վանքը, Աղվերանի, Մեղրաձորի և այլ հուշարձանները, որոնք իրենց հաստատուն տեղն ու նշանակությունը ունեն հայ պատմական ճարտարապետության մեջ:

Բջնի գյուղը¹, որի հուշարձանների վերանորոգման հարցերին է նվիրված այս հոդվածը, հիշատակվում է մատենագրության մեջ դեռ 5-րդ դարից²: Նա գտնվում է Հրազդան գետի գեղատեսիլ կիրճում, շրջապատված բարձրադիր ժայռերով: Հանդիսացել է Պահլավունիների տոհմային կալվածքը և խոշոր դեր է խաղացել միջնադարի հայ կյանքում, որի մասին պահպանված տեղեկություններում պատմիչները նույնիսկ քաղաք կամ քերդաքաղաք են անվանում: Բջնին ենթակա է եղել բազմաթիվ հարձակումների և ասպատակությունների: Պատմական աղբյուրները պատմում են այն մասին, որ 1043 թվին Գրիգոր Մագիստրոս Պահլավունին քաջությամբ պաշտպանել է ամրոցը ալլագիների հարձակումներից: Նման հարձակումները և դրա հետ կապված ավերվածությունները երկար ժամանակով դադարեցրել են գյուղի և ամրոցը երկրի շինարարական կյանքն ու բարգավաճումը:

¹ Հ. Առաքելյան, Հանրագիտարան, Թիֆլիս, 1916, էջ 302—303:

² Մ. արքեպ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի գավառի, Վաղարշապատ, 1895, էջ 316—333, Ե. Լալայան, Ազգագրական հանդես, 23 Թիֆլիս, 1912, էջ 140—148:

Լեկթենանտի արշավանքների ժամանակ, 1387 թվին, Բջնին մեծ չափով ավերվում է և միայն 120 տարուց հետո հիշատակվում է 16-րդ դարի մի հիշատակարանում և մնում է ավերակ մինչև 17-րդ դարը, երբ շինարարական աշխուժության օրերին դարձյալ սկսում է շենանալ:

Եվրոպական ճանապարհորդներից 17—18-րդ դարերին այցելել են գյուղը (Շարդենը, Թոռնեֆորը) և նկարագրել են այն իրենց աշխատություններում:

Հայ ճարտարապետության պատմության բազմավաստակ մշակ Ն. Մ. Տոկարսկին, 1923 թվին այցելելով այդ գյուղը, տվել է նրա հուշարձանների հակիրճ նկարագրությունը և նրանց փոխադարձ դասավորման հատակագիծ-սխեման³ (Նկ. 1): Հատակագծի վրա պարզ զգացվում է ամրոցի գերիշխող դիրքը, որը տեղադրված է բարձրադիր, անառիկ ժայռերով կազմված հարթակի վրա և բաժանում է գյուղը երկու մասերի՝ մեծ և փոքր Բջնիների:

Ամրոցը խոշոր դեր է կատարել և շատ անգամ է ազատել իր ժողովրդին մեծ ավերածություններից և բնաջնջումից: Վաղ նկարագրությունների համաձայն⁴, ամրոցապատերից պահպանվել են զգալի մասեր, որոնցից այժմ շատ չնչին մնացորդներ են մեզ հասել:

Արևմտյան կողմում կառուցված պարսպի մնացորդից, որը անշուշտ կարոտ է վերանորոգման, պահպանվել է մի հատված: Ժայռի ստորոտում ապրող գյուղի բնակիչների տնամերձ հողամասերում պահպանվել

³ Н. М. Токарский, Предварительный отчет о поездке в Армению осенью 1923 г.

⁴ Մ. արքեպ. Սմբատյանց, նույն տեղում:

են նաև արտաքին պարիսպների մնացորդները, հատկապես կոթ բուրգերի հիմքերը:

Ամրոցի հարթակի վրա պահպանվել են ա. Խաչ մատուռի և ստորգետնյա ջրամբարի մնացորդները: Մ. արքեպ. Սմբատյանցի մոտ հիշատակվածի և տեղացիների պատմածների համաձայն պետք է պահպանված լինեն ստորգետնյա գաղտնի անցքի մնացորդները, սակայն նրա ակունքը այժմ տեսնել հնարավոր չէ՝ հողով ծածկված լինելու պատճառով: Անհի և Ամբերդի օրինակով ամրոցը ապահովված է եղել խմելու ջրով, որը բերվել է բավականին մեծ հեռավորությունից, թրծված կավե խողովակներով⁵:

Ամրոցը կարոտ է ավելի մանրամասն ուսումնասիրման և հնագիտական պեղումների, որոնց շնորհիվ կպարզվեն պատմության դեռ անհայտ էջերը:

Տեղի բնորոշյան հարցը և ճարտարագիտական տեսակետից ամրոցի կառուցումը վկայում են նրա շինարարների ամրոցաշինության նրբին արվեստին քաջաճանդ լինելու մասին:

Մեծ Բջնի կենտրոնում, ամրոցից արևմուտք գտնվում է Գրիգոր Մագիստրոսի կողմից 1031 թվին կառուցված Աստվածածին եկեղեցին:

Այս հուշարձանը պատմական մեծ արժեքներ կապացնելով հանդերձ, հանդիսանում է նաև հալ պատմական ճարտարապետության նշանավոր կոթողներից մեկը:


Հատակագծային լուծումով հուշարձանը գմբեթավոր սրահ է (նկ. 2), վերցված արտաքին պատերով կազմված ուղղանկյունում մեջ: Չորս հզոր ողմամույթերի վրա հանգչում են գմբեթակիր, մի փոքր պաքաձև կամարները, որոնցով առաջագած քառակուսին կրում է թմբուկն ու գմբեթը: Ներսում անցումը քառակուսուց կոթ թմբուկի իրագործվում է առագաստների միջոցով:

Գմբեթավոր սրահների համար շատ բնորոշ է միասնական, չմասնահատված ներսի տարածությունը, որը արդեն առնչվում է 6—7-րդ դարերում կառուցված Պողոսի և Արուհի տաճարներին: Բջնիում այդ տարածության կազմակերպումը այլ լուծում է ստացել: Արևելյան գմբեթակիր մույթերը դուրս են գալիս ոչ թե երկայնական պատերից, ինչպես Պողոսիում և Արուհիում, այլ հանդիսանում են ավագ խորանը՝ արսիդան եզրող մույթեր: Այս հանգամանքը ավելի է շեշտում ավագ խորանի դերը և ուժեղացնում է ընդհանուր տպավորությունը:

Գմբեթակիր հզոր մույթերը կազմված են կիսակլոր սյուների և ուղղանկյուն որմնա-

սյուների հետզհետե ետ նահանջող փնջից, որոնք ընդգծելով մույթի կրողունակությունը, ուղղաձիգ, իրար հաջորդող ծավալների շնորհիվ, հաղորդում են նրան որոշ թեթևություն: Մույթերի խոյակների քանդակները՝ հարազատ մնալով իրենց դարի ոճական առանձնահատկություններին, հեռավոր հիշեցնում են Գորիսի շրջանի Բդեհն-Նորաշանքի և Անհի Փրկչի եկեղեցու վրա կիրառված զարդաքանդակները⁶:

Ավագ խորանի արևելյան պատուհանի տակ տեղադրված է մի խորշ, որի զարդաքանդակների ոճը բնորոշ է 11-րդ դարի հուշարձանների վրա օգտագործված զարդա-




Նկ. 1. Բջնի գյուղի մոտավոր հատակագիծը արտատպվում է Ն. Տոկարսկու 1921 թ. հրատարակած գրքից

քանդակների ոճին (Մարմաշեն): Եկեղեցու երկու մուտքերը, քացված հարավային և արեւմտյան պատերի մեջ, ձևավորված են շատ գուսպ, պատի հարթությունից մի փոքր դուրս եկած կամարների և որմնասյուների միջոցով առանց զարդաքանդակների: Հարավային շքամուտքի ճակատակալ քարի վրա փորագրված է վերանորոգման վերաբերյալ արձանագրությունը:

Հիշատակման ենթակա են նաև Բջնի Աստվածածին եկեղեցու հարավային, հյուսիսային և արևմտյան պատերի մեջ, ներսի կողմից, տեղադրված քարե հուժկու գոտիները: Այդ քարե գոտիները ունեն քարձակ սալերի տեսք 20 սմ հաստությամբ և 50—60 սմ պատից ելուստով ու կատարել են պատերի համար կոշտության կողի դեր, ծառայելով միևնույն ժամանակ իբրև հակա-սեյսմիկ գոտի⁷:

⁵ Ս. Խ. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, 1960, Երևան, էջ 157:

⁷ Հ. Գ. Սարգսյան, Յու. Ա. Թամանյան, Պատմա-քանաիրական հանդես, 1970, № 1:



Նկ. 2. Աստվածածին եկեղեցու հատակագիծը

Բազմանիստ թմբուկը պսակվում է ակոսավոր հովհարաձև վեղարով, որը եռանկյունաձև ճակտոններով կազմված քիվ ունի: Հիմք ընդունելով վեղարի ձևը, կարելի է որոշ համեմատության գուգահեռներ տանել Մարմաշենի, Անիի, Տիգրան Հոնենցի, Աղջոց վանքի ու նման այլ հուշարձանների բազմասկոս հովհարատիպ վեղարային ծածկոցների միջև: Ինչպես երևում է, 11-րդ դարում վեղարային ծածկի այդ ձևը մեծ տարածում է ունեցել, որը կարող է նույնիսկ կովան հանդիսանալ հուշարձանների կառուցման ժամանակը որոշելու համար:

Հարավային պատի վրա պահպանվել են մեծ թվով արձանագրություններ, որոնցից ամենանշանավորը կառուցման արձանագրությունն է՝ հարավային մուտքի աջ կողմի վրա (ԹԿԶ—(1031):

Ն. Մ. Տոկարսկին⁸ եկեղեցու թմբուկը, վեղարի հետ միասին, համարում է ոչ սկզբնական կառուցվածք, այլ վերակառուցման արդյունք: Հարավային դռան ճակա-

տակալ քարի վրա պահպանվել է վերակառուցման մասին 1209 թվին գրված արձանագրությունը, որտեղ ասվում է միայն տանիքների սալահատակման մասին և ոչ մի խոսք թմբուկի և վեղարի վերակառուցման մասին: Մեր դիտումները համոզում են մեզ, որ թմբուկը վերակառուցված չէ: Հավանական է պարզապես վերանորոգված լինի տեղ-տեղ երեսապատերի փոփոխումով կամ ամրացումով:

Եկեղեցու հարավային պատին կից, արեւելյան կողմում, ավելի ուշ կառուցվել է մատուռ-դամբարանը: Կառուցման մասին ստույգ տվյալներ չկան, սակայն ճարտարապետական ձևերի քննությունը հնարավորություն է տալիս ենթադրաբար կառուցման ժամանակը համարել 12—13-րդ դարը: Հատակագծում քառանկյունի, թաղակապ ծածկով, երկթեք տանիքով մատուռ-դամբարանը մերվել է ամբողջ համակառուցքին և դարձել նրա անբաժանելի մասը:

Արևմուտքից արտաքուստ արված է կամարակապ խորշ, ուր ագուցված է խոշոր չափի քանդակագարդ խաչքար: Տանիքի վրա ավելի ուշ կառուցված պոմնագարդ վեղարը այժմ ծառայում է իբրև զանգակատուն: Եկեղեցու հարավային պատի վրա գրված արձանագրության այն մասը, որ պետք է մնար մատուռ-դամբարանի պատի տակ, շարունակվել է նորակառույց պատի վրա:

Հուշարձանախումբը պարսպապատված է, որը կառուցել է վանքի առաջնորդ Մովսես վարդապետը 1666 թվին: Պարիսպը կառուցված է մեծ և փոքր կիսամշակ որձաքարերից, անկյուններում ունի կլոր բրգաձև աշտարակներ:

Աստվածածին եկեղեցու շուրջը, հատկապես նրա արևելյան կողմում կան շատ գեղեցիկ քանդակներով խաչքարեր, որոնցից երկուսը պատկանում են միջնադարյան նշանավոր վարպետին՝ Մելիքսեթ Կազմողին⁹:

«Նշանավոր Բչնի գյուղի եկեղեցու բակում կանգնած կան երկու խաչքարեր այս վարպետի ստորագրությամբ: Դրանցից մեկը եկեղեցու արևելյան պատի մոտ մի շարքի կանգնած 6 խաչքարերից մեկն է, ամենահյուսիսայինը Մելիքսեթ Կազմողի արվեստին հատուկ մանր ու նուրբ քանդակներով, քիվին ուռուցիկ տառերով գրված է.

Սբ Խաչս Բար(է)խաւս Մելիքսեթ
քահանային թվ :միԻԹ: (1580)¹⁰:

⁹ Ս. Բաթխոդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 156:

¹⁰ Նույն տեղում:

⁸ Ն. Մ. Տոկարսկի, նշված աշխատությունը, էջ 340:

Մյուս խաչքարը կանգնեցված է պարսպի հյուսիս-արևելյան անկյան գլխին:

Աստվածածին եկեղեցին դարերի ընթացքում ենթարկվել է մի շարք մասնակի վերանորոգումների և այդ պատճառով զգալի խախտվել է նրա նախնական տեսքը: Արևմտյան ճակատը, օրինակ՝ վերափոխվել է վերացվել են ցածր լանջերը և իրագործվել է ընդհանուր երկթեք տանիքը:

1939 թվին մասնակի վերանորոգվեցին հուշարձանի պատերի ստորին մասերը: 1947 թվին վերանորոգվեցին հյուսիսային ճակատի երեսապատից գոթիկ հաստվածները, ընդ որում՝ մանր քարով, որը կազմում էր հուշարձանի շարքերի բարձրության կեսը:

1955 թվին հուշարձանի հարավային ճակատի երեսապատի և ծածկերի ձևավոր սալերի վիճակը շատ վատացել էր: Առաջացած ճեղքերի միջով անձրևաջրերը առատորեն թափվում էին եկեղեցու ներս, վտանգ առաջացնելով հուշարձանի կառուցության համար: Պահանջվում էին շտապօրին միջոցներ:

1957 թվին հիմնովին վերանորոգվեց հուշարձանը: Վերանորոգման աշխատանքների մեթոդիկան պահանջում էր հարազատ մնալ հուշարձանի նախնական պատմական տեսքին, որի համար անհրաժեշտ էր մի կողմից լայնորեն օգտագործել եկեղեցու պահպանված, մշակված և թեկուզ որոշ չափով վնասված քարերը և մյուս կողմից կիրառել այնպիսի շինանյութեր, որոնք ամենից ավելի են համապատասխանում շենքի ճարտարապետական ոճին: Այդ տեսակետից վերաշարք ամենանպատակահարմար աշխատանքն է, որը և զգալի տեղ է գրավել այս հուշարձանի վրա: Վերաշարքվել են հարավային ճակատի երեսապատերը, հյուսիսային ճակատի քիվերը, պակասող մասերում լրացվելով նոր տաշված քարերով: Վերանորոգվել են եկեղեցու հիմնաստիճանները, նույնպես լրացվելով, պակասող մասերում նոր քարով:

Եկեղեցու հարավային ճակատի մեծածավալ տեղական տուֆե երեսապատերի քարերը, շուրջ 40 քառ. մետր մակերեսով, խախտվել, տեղաշարժ էին եղել: Անհրաժեշտ էր շտապ կերպով վերաշարքել այն, ինչպես և հիմնական վերանորոգման ենթարկել արտաքին մյուս պատերի երեսապատերը և տանիքների հետագայի կառուցած տուֆ քարե հարթ սալերը հանել և վերականգնել հուշարձանի նախնական ծածկասալերը, որոնց նմուշները պահպանվել էին թե տանիքներին և թե բեկորների մեջ:

Առաջին հերթին մեծ զգուշությամբ վերաշարքվեցին հարավային ճակատի վերը հիշված վտանգավոր վիճակում գտնվող երեսապատ քարերը: Այնուհետև բանդվեցին

և վերականգնվեցին եկեղեցու հարավ-արևմելյան անկյան ցածր լանջի մանր անձն քարերով շարված երեսապատերը և քիվերը: Մաքրվեց այդ լանջի տակ, հողով ու ճեղքված քարով արված լիցքը, տեղը լցվեց



Նկ. 3. Աստվածածին եկեղեցու հարավային ճակատը վերանորոգումից առաջ

խառը շաղախ ճեղքված քարի հետ միասին: Կառուցվեց եկեղեցու և զանգակատան միացման մասում քարե առվակ՝ տանիքներից այդտեղ թափվող անձրևաջրերի հեռացման համար:

Մնացած ճակատների երեսապատերի ու քիվերի վերանորոգումները կատարելուց հետո, սկսվեցին տանիքների վերանորոգման աշխատանքները: Քանդվեցին բոլոր լանջերի ծածկասալերը, տակի հողմահարված շաղախի հետ միասին, մաքրվեց, լվացվեց փոշուց և ապա բոլոր լանջերը ծածկվեցին նոր, չափածո տուֆ քարե ձևավոր ծածկասալերով:

Հուշարձանը կառուցված լինելով սարավանդի ստորոտում, կտրում է հյուսիսային լանջը համարյա տանիքների բարձրության հավասար: Այդ պատճառով տանիքների համար անհրաժեշտ շինանյութերը՝ քարը,

շաղախը շենքի վրա փոխադրելու համար, կառուցվեց փայտյա ժամանակավոր կամրելակ հյուսիսային պարսպի հողաթմբի վրա պատրաստված շինհրապարակից մինչև եկեղեցին պարփակող տախտակամածը:

Համարյա լրիվ նոր քարով վերականգնվել են եկեղեցու և մատուռ-դամբարանի քարե տանիքները: (Նկ. 3 և 4): Խարխված կամ տեղաշարժված ձևավոր սալերը վերաշարվել են և ամրացվել իրենց նախնական տեղերում:

Նախորդ վերանորոգումների ժամանակ տանիքի վրա շարված անձն քարերը, ինչպես նաև պակասող սալերը փոխարինվել են նոր տաշված, համանման սալերով:

Այսպիսով ամբողջովին վերականգնվել է տանիքի ծածկի նախնական շարվածքը: (Նկ. 5 և 6): Նոր տաշված տուֆե սալերի մակերեսները անջրաթափանցիկ դարձնելու նպատակով նրանք օծվել են թանձր ձիթաներկով, որը կանխում է ջրերի ներծծումը քարի մեջ՝ մինչև նրանց մակերեսի վրա բնական անջրաթափանց թաղանթի գոյացումը:

Բջնիի Աստվածածին եկեղեցու հիմնական վերանորոգումը¹¹ կատարվեց Եղվարդի գորշ գույնի տեղական տուֆ քարով, խառը շաղախով: Ավագը փոխադրվում էր Սևանից:

Ամրոցից արևելք, փոքր Բջնիում, սրածայր ժայռին ծվարած, պահպանվել է 7-րդ դարում կառուցված խաչաձև հատակագծով ս. Սարգիս եկեղեցին:


Ս. Սարգիս հուշարձանը հանրահայտ Լմբատավանքի (Արթիկ), Կարմրավորի (Աշտարակ), Փարպիի եկեղեցու, Օշականի մանկանոցի և ուրիշ նման խաչաձև հատակագիծ ունեցող հուշարձանների մեջ ունի իր յուրահատուկ տեղը և նշանակությունը: Խաչթևերից երեքը ուղղանկյունի են, իսկ արևելյանը ընդգրկում է իր մեջ կիսաբոլորակ արսիդան:

Հուշարձանի չափերը մեծ չեն, այնուամենայնիվ իր համաչափություններով, բնության մեջ իր դիրքով, այդ գողտրիկ հուշարձանը այցելուի վրա թողնում է անմոռաց տպավորություն:

Հուշարձանը մեզ է հասել համարյա առանց լուրջ վերափոխությունների, եթե չբնաշխարհից այն հանգամանքը, որ սկզբնական

տանիքը եղել է կղմինդրյա, իսկ մեզ հասածը կազմված է քարե սալերից:

Հայաստանում 1964 թվին ստեղծված պատմական հուշարձանների պահպանման քննչությունը, 1969 թվին միջոցներ տրամադրեց ս. Սարգիս հուշարձանի վերանորոգման համար, որը և իրագործվում է գյուղական շինարարության մինիստրության ջանքերով:



Նկ. 4. Աստվածածին եկեղեցու հարավային նակատը վերանորոգումից հետո

Հիմնականում վերանորոգվել են նակատների երեսապատերը, քիվերը և քարե ծածկասալերը: Հնուց պահպանված տանիքի սալերը չէին կարող ապահովել հուշարձանի երկարակեցությունը, ուստի նոր քարերով իրագործված տանիքը հուշարձանը պաշտպանում է մթնոլորտային տեղումներից: Տանիքների ծածկասալերի ձևը պահպանվել է համաձայն գտնված բեկորների և մնացորդների, իսկ միայն նակատների լանջերի վրա արվել է սվելի ապահով տեսակի ծածկ, որ քարե սալերը նստում են իրար վրա, ստեղծելով ջրի համար անթափանց ծածկոց:

Վերանորոգման նախագիծ կազմելիս (նարտարապետներ Ծ. Ագատյան և Յու.

¹¹ Այս աշխատանքները 1957 թվին կատարվեցին Էջմիածնի Մայր Աթոռի պատվերով, ճարտարապետներ Ծ. Ագատյանի և Յու. Թամանյանի չափագրության հիման վրա տողերիս հեղինակի կազմած վերանորոգման աշխատանքների նախագծով ճարտարապետ-ոնտալրատոր (1959 թվին վախճանված) Հրանտ Հակոբյանի ղեկավարությամբ:



Նկ. 5. Աստվածածին եկեղեցու հյուսիսային ճակատը վերանորոգումից առաջ



Նկ. 6. Աստվածածին եկեղեցու հյուսիսային ճակատը վերանորոգումից հետո

Թամանյան) մեծ դժվարություն էր ներկայացնում տումբերի ծածկերի ձևի որոշման հարցը:

Միայն մոտիկից գննելով հուշարձանի այդ մասերը, հնարավոր եղավ որոշել ծածկերի ձևը և տեղադրել այն:

Ճակատների պսակող կամարաձև փորվածքներով քիվը նույնպես բնորոշ է այդ հուշարձանի կառուցման տարեթիվը որոշելու համար¹²:

Հետաքրքրական է, որ կամարաձև քիվո հանդես գալով դեռ 7-րդ դարի հուշարձանների վրա, հետագա դարերում չի կրկնվում: Միայն 10-րդ դարում կառուցված Ախթա-


մարի տաճարում թմբուկի վրա տեղադրվել է նման քիվը¹³:


Երեսուպատման համար օգտագործվել են մուգ դարչնագույն տեղական տուֆի բարերը Աբովյանի (Կոտայքի) շրջանի բարհանքներից, պահպանելով շարքի բարձրությունը, կառուցվածքի շարքերին համապատասխան չափը: Ծաղախի համար ծառայել է լիտոիդ պեմզան Ջրաբերի ավազահանքից:

Բջնի գլուղում պահպանվել են նաև ուրիշ փոքր և մեծ հուշարձաններ, որոնց վերանորոգումը դեռ չի սկսվել, սակայն նրանք էլ հերթագրված են և կվերանորոգվեն:

¹² Ն. Մ. Տոկարսկի, նշված աշխատությունը, էջ 340:

¹³ Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв. Ереван 1961 г., ст. 166.





ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՄԱՏՈՒՆԻ

Ս. Էջմիածնի բազմարդյուն ու գիտնական միաբանների շարքում պատվավոր տեղ է գրավում օշականցի Սահակ վարդապետ Ամատունին, որը հաջ բանասիրության մեջ ունի իր առանձին տեղն ու դիրքը: Նա բազմակողմանիորեն զարգացած անձնավորություն էր, ճանաչված ոչ միայն որպես եկեղեցական, այլև որպես ձայնագրագետ, շարականագետ, մանկավարժ և բարբառային բառերի բառարանագիր:

Թեև Սահակ վարդապետ Ամատունին հաջ մշակույթին տվել է մնայուն աշխատություններ, բայց մինչև օրս նրա կյանքն ու գործունեությունը ուսումնասիրված չէ, նրա մասին չի գրվել ոչ մի հոդված կամ ուսումնասիրություն, որը նշեր նրա տեղը հաջ մշակույթի երախտավոր գործիչների շարքում:

Սահակ վարդապետ Ամատունին ծնվել է 1856¹ թ. Օշականում: Ծննդավայրում սկզբնական կրթությունը ստանալուց հետո նա ուսումը շարունակել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում: 1870 թ. սեպտեմբերի 6-ին Մեսրոպ արք. Սմբատյանը նրան ձեռնադրում է կիսասարկավագ, իսկ 1876 թ.² սարկավագ:

Ամատունին ժառանգավորաց դպրոցում աչքի է ընկնում իր երաժշտական արտակարգ ընդունակություններով, որի համար վանքում նրան ձայնագրագետ սարկավագ են ասում:

Ինչպես հայտնի է, Գևորգ 4-րդ մեծագործ կաթողիկոսը 1873 թ. Կ. Պոլսից Մայր Աթոռ է հրավիրում

հայկական ձայնագրության գիտակ, երաժշտագետ Ն. Թաշճյանին՝ նպատակ ունենալով նրա օգնությամբ ձայնագրել ու տպագրել ս. պատարագը, շարականները և ժամագիրքը: Թաշճյանը ուղիղ մի տարի աշխատում է Էջմիածնում և գրի առնում շարականները, պատարագի երգեցողությունն ու հոգևոր այլ մեղեդիներ և միաժամանակ Էջմիածնի ժառանգավորաց դպրոցի 25 ընդունակ աշակերտների հետ պարապում է, նրանց սովորեցնելով հայկական ձայնագրությունը: Այդ 25 աշակերտների մեջ առանձնապես աչքի են ընկնում Մ. Եկմալյանն ու Սահակ Ամատունին: Վերջինս Ն. Թաշճյանի երաշխավորությամբ նորաբաց Գևորգյան ճեմարանում նշանակվում է հայկական ձայնագրության ուսուցիչ: Ահա թե ինչ է գրում Թաշճյանը իր 1874 թ. 1 սեպտեմբերի թվակիր վկայականում:

«ՎԱՅԱԿԱՆ»

Դասատուութեամբ մերով ի միջոցի միոյ ամի, այն է ի 1873-էն մինչ ի 1874 ամն, ուսա կատարելապէս զհայկական ձայնագրութիւն աշակերտ ուսումնարանի սրբոյ Էջմիածնի Սահակ Ամատունի օշականցի, որ և գիտէ և ունի կարողութիւն համարձակ ուսուցանելոյ զնոյն հայկական ձայնագրութիւնն ու նովա գրովանդակ գերգս և զեղանակս շարականաց և զայլ երգեցողութիւնս հայկական երաժշտութեան, որում վկայեմ իմով իսկական ստորագրութեամբ»²:

¹ Տե՛ս Ս. Ամատունու անձնական գործը, ՀՍՍՀ Պետական կենտրոնական Պատմական արխիվ, ֆոնդ 57, ց. 2, գործ № 1639:

² Մատենադարան, Ս. վրդ. Ամատունու արխիվ, թղթ. 39, վավ. 55:

Ն. Թաշճյանի Կ. Պոլիս վերադառնալուց հետո Էջմիածնում Սահակ սարկավագ Ամատունին մեծ ջանասիրությամբ զբաղվում է շարականների ուսումնասիրությամբ և աշխատում հայ եկեղեցական երգերի էջմիածնական եղանակների գրառման ուղղությամբ:



1883 թ. «Արարատ»-ում (Էջ 304—312) տպագրված իր հոդվածում Ամատունին հիշատակում է Երեմյասի Գրիգոր երաժիշտ-նախկուպոս Հովքյանից հին անաղարտ եղանակները ձայնագրելու իր գովելի մտադրությունը: Այդ առթիվ հայ հին երաժշտության մասնագետ Ն. Թառնիզյանը իր հոդվածներից մեկում գրում է. «...Կարծում ենք, որ արժե մասնավոր որոնումներ նախաձեռնել պարզելու համար, թե Ամատունին երբևէ իրագործել է հիշյալ երգերի ձայնագրությունները»³: Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվող Սահակ վարդապետ Ամատունու արխիվում այդ հարցի վերաբերյալ կան բազմաթիվ փաստաթղթեր, որոնք ապացուցում են, որ իրոք, Սահակ վ. Ամատունին կատարել է այդ ձայնագրությունը: Էջմիածնի սինոդը 1884 թ. հունվարի 18-ին № 39 որոշմամբ Սահակ սարկավագ Ամատունուն ուղարկում է Երեմյասի. «Կառավարչական մասն սինոդի ըստ հրամանի Տեսրց Անդամոց առաջադրել Ձեզ գնալ ի վանք Երեմյակու առ վանահայր մորին Գրիգոր արքեպիսկոպոսն Յովքեանց և ըստ երգելոյն զոր մորին գերապատուութիւն երգեսցի:

³ «Էջմիածին», 1969 թ. № 5, էջ 46:

ճշտի ձայնագրել զշարականս և այլ եկեղեցական երգեցողութիւնս ըստ հին եղանակի Աթոռոյս, որպէսզի ըստ այնմ տպագրութեամբ ի լոյս ածցի և հրատարակեսցի վասն միաձև երգեցողութեան յամենայն եկեղեցիս Հայոց...»:

Կան նաև հավատարմի այլ փաստաթղթեր:

1887 թ. հունիսի 14-ին Մակար կաթողիկոսի կարգադրությամբ ս. Գայանէ վանքում Թադեոս արքեպիսկոպոսի ձեռամբ Սահակ Ամատունին կուսակրոն քահանա է ձեռնադրվում:

Սահակ Ամատունին վանքում վարել է մի շարք պաշտոններ: 1883 թ. մարտի 28-ին նշանակվել է տպարանական խորհրդի անդամ, 1888 թ. դեկտեմբերի 20-ին Էջմիածնի մատենադարանապետի օգնական, իսկ 1891 թ. նոյեմբերի 30-ին սինոդի որոշումով՝ մատենադարանապետ⁶: Ամատունին մեծ ճիգ ու ջանք է գործադրում մատենադարանի ձևագրերի վիճակն ու պահպանումը կարգավորելու ուղղությամբ: Ամատունու ժամանակ Էջմիածնի մատենադարանը չնայած ուներ իր ձեռագրացուցակը⁷, որը կազմվել էր 1861 թ. Դանիել վրդ. Շահնազարյանի կողմից և հրատարակվել 1863 թ. Թիֆլիսում, սակայն հետագայում մատենադարանի ձեռք բերած նոր ձեռագրերը միշտ չէին գրանցվել ձեռագրացուցակում և զգալի կերպով խախտվել էին հետագա աշխատողների կողմից ձեռագրերի ունեցած համարների հերթականությունը, որը և պատճառ դարձավ բազմաթիվ թյուրիմացությունների: Բանն այն է, որ Կարենյանցի Մայր Ձեռագրացուցակում հետագա լրացնողները ձեռք բերած նոր ձեռագրերը գրանցել էին ոչ թե ձեռագրացուցակի ընդունած համարական հերթականությամբ, այլ ըստ տեսակի այբբենական կարգով և համապատասխան բաժիններով: Այդ խառնաշփոթությանը վերջ տալու նպատակով 1892 թ. մատենադարանապետ Սահակ վրդ. Ամատունին ձեռագրերի նոր համարակալում, նոր տեղափոխություններ և վերջնական նոր ցուցակ է կազմում:

1892 թ. օգոստոսի 28-ին սինոդին հասցեագրված իր հայտարարության մեջ Ամատունին գրում է. «...զամիսս երիս տորոթալ զանձն իմ ցաւագր անդ ի խորշս մատենադարանին ի փոփոխութիւնս թուանշանաց իւրաքանչիւրոց մատենից, որք տպագրեալ մածուցան ի կազմս նոցին, ապա մէն միայն կազմեցի և զայս ցուցակ, զոր կից ընդ սմին առաջի առնեմ ատենիդ ունել զայն հաճապալ ի դմա ի հաշուետրուութիւն ապագայի ուէ մատենադարանապետի»: Այժմ 3 հատորից բաղկացած այդ ձեռագրացուցակները

⁴ Մատենադարան, Ա. վրդ. Ամատունու արխիվ, թղթ. 39, վավ. 59:

⁵ Նույն տեղում, թղթ. 39, վավ. 54:

⁶ Նույն տեղում, թղթ. 39, վավ. 57:

⁷ Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի: Տպագրեալ հրամանաւ տեսան Մատթէոսի ընդհանրական հայրապետին Ամենայն Հայոց: Ծախիւք ի Կարնոյ գաղթական Յակոբայ վարժապետի Կարենեանց յօգուտ դարոցի ժառանգաւորաց սրբոյ Էջմիածնի: Թիֆլիս, 1863:

գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ № 4ա, 4բ):

Սահակ վարդապետ Ամատունին կազմել է նաև Սահակ վանքի ձեռագրացուցակը, որը հրատարակվել է Մեսրոպ արք. Սմբատյանի «Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գատի, որ այժմ Նոր-Բաշա-գիտ գատ» գրքում 1895 թվականին: «Ցուցակ ձեռագիր մատենից մատենադարանի սուրբ անապատին Սահակ կազմեալ ձեռամբ Ամատունի Սահակ վարդապետի օշականցոյ», էջ 395—412: Նկարագրված է 412 ձեռագիրը:

Սահակ Ամատունու այդ քրտնաջան աշխատանքը բարձր է գնահատել Խրիմյան Հայրիկը, որը 1894 թ. 6 հոկտեմբերի կոնդակով հոգեշնորհ Սահակ վարդապետ Ամատունուն ողջունում է աշխատանքում ձեռք բերած հաջողությունների համար և գրում. «Վասն որոյ ի նշան գոհունակութեան Մերոյ, արժան վարկանմբ այսու հայրապետական կոնդակաւս շնորհել Ձեզ զխաչ վարդապետական ականակոտ կրել ի լանջս, ի պարծանս վաստակոց Ձերոց»⁸:

1899 թ. հուլիսի 4-ին հայրապետական կոնդակով Սահակ վրդ. Ամատունին նշանակվել է ս. Շողակաթ վանքի վանահայր, որպեսզի «...յետ այսու առաել ես աշխատել ի բարեկարգութիւն և ի պայծառութիւն մեծաստանին այնորիկ»⁹:

Սահակ վարդապետ Ամատունին Գևորգյան ճեմարանում երկար ժամանակ դասավանդել է հայկական ծայնագրություն և քրիստոնեական վարդապետություն Հալապոլիսում և Եդեսիայում: Եղել է Կոմիտաս վարդապետի առաջին ու սիրված ուսուցիչը և հետագայում հարգված բարեկամը, որի երգեցողությամբ Կոմիտասը բազմաթիվ երգեր է ձայնագրել ու կոմպոզիցիոն փրկել:

Ամատունին վանքում կատարած վարչական ու մանկավարժական աշխատանքներին զուգընթաց անդադրում զբաղվել է նաև բանասիրությամբ: Նրա բանասիրական գործունեությունը սերտորեն կապված է «Արարատ» ամսագրի հետ, որտեղ նա հաճախ էր հանդես գալիս հայկական ձայնագրության և շարականների մասին բազմաթիվ հոդվածներով:

Խրիմյան Հայրիկը եղել է Ա. Ամատունու առաջին քաջալերողն ու հովանավորողը: Խրիմյան Հայրիկը դեռևս 1895 թ. հունվարի 24-ին Թիֆլիսից Ամատունուն գրած նամակում հայտնում է, որ Նախիջևանցի մի հարուստ բժիշկ մեծ գումար է կտակել, խոստանում է այդ գումարը օգտագործել իրեն՝ Ամատունու կողմից կազմվելիք բառարանի աշխատանքները արագացնելու համար: «Բաշ իմանալով, որ բառարան կազմելը հեշտ գործ չէ, Ամենայն Հայոց կաթողիկոսը Ամատունուն հուշում է. «Այս աշխատության մեջ դուք միայն բավական չեք. պետք է դպիր Պ. Գալուստն ևս Ձեզ ընկեր առնեք, որ ընդունակ և հանճարեղ է, որ քաջ իսկ կարող է որոշել հոմանիշ բառեր...»¹⁰:

Ամատունու խնդրանքով Խրիմյան Հայրիկը մա-

տենադարանի համար բերել է տալիս եվրոպացի հայագետներ Հյուբշմանի, Լագարտի, Մյուլլերի, Գետերմանի, Կոնիքերի, Մակլերի, Լանգլուայի և այլոց աշխատությունները:

1911 թ. լույս է տեսնում Սահակ վարդապետ Ամատունու «Հին և նոր պարականոն կամ անվաներ շարականներ»¹¹ աշխատությունը, որով նա պատվավոր տեղ է գրավում հայ բանասերների շարքում: Ժամանակին հայ մամուլում աշխատության մասին լույս են տեսնում բազմաթիվ գրախոսականներ և որտեղ բարձր է գնահատվում Ամատունու պրպտուն մտքի արգասիքը:

Այս աշխատությունը ջերմ գնահատանքի է արժանացել նաև Մաղաթիա արքեպիսկոպոս Օրմանյանի կողմից, որը Ամատունուն գրել է. «Առաջա Ձեր աշխատասիրութիւնը սովորականներէն դուրս թողում շարականներուն հաւաքածոյն և շնորհակալ եմ, որ հաճեք եք, զիս ալ յիշել այդ առթիւ:

Միտքս կուգայ, որ 24 տարի առաջ այդ աշխատութեան առիթ ընծայողներուն մեջ ես ալ գտնուեցայ... Իմ համոզմամբ այն ամէն աշխատութիւն որ նախնեաց բեկորները կորստեցէ և մոռացութեցէ ազատելու նպատակն ունի, գնահատելի է յոյժ և կը գնահատեմ Ձեր այդ աշխատութիւնն ալ...»¹²:

Սահակ Ամատունու նոր աշխատությունը չփրկեց նաև հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի ուշադրությունից. նա կարդալով՝ հեղինակին գրեց սրտատուշ տողեր.

«Բարձրապատիվ Սահակ հայր սուրբ,—գրում է Հ. Թումանյանը Ամատունուն հղած 1912 թ. 28 հունիսի թվակիր նամակում,—ինձ են հասել Ձեր ուղարկած «Հին և նոր պարականոն շարականները» գիրքը և Ձեր խնդակցությունը իմ ազատվելու առթիվ:

Լիափրտ շնորհակալ եմ Ձեր բարեկամական ազնիվ զգացմունքի համար և շատ եմ ուրախանում, տեսնելով Ձեր նորահնոր գեղեցիկ գրական աշխատությունները, անհամբեր պատում եմ «Բառ ու բանին»:

Էջմիածինը որքան կարևոր լինի իր վարչական նշանակությամբ, ավելի սիրելի է դառնալու երբ գրական ու գիտական գործերը ճոխանան ու հաճախանան նրա պարիսպների մեջ: Եվ ինձ համար էլ տեսակի գործերն ու գործիչները միշտ մնալու են ավելի թանկ ու սիրելի, քան ամեն տեսակի պաշտոնյաներ: Ցանկանալով հաջողություն ու ատողություն ջերմ բարեկերպ մնամ միշտ Ձեր բարեկամը Հովհ. Թումանյան»¹³:

Սակայն Ամատունին գիշեր ու ցերեկ աշխատում էր իր գլուխ-գործոց աշխատության վրա, որը իրեն պիտի անմահացներ: Տարիներ շարունակ նա զբաղ-

¹¹ Հին և նոր պարականոն կամ անվաներ շարականներ: Լոյս ընծայեց Սահակ վարդապետ Ամատունի: Միաբան Մայր Աթոռու ս. Էջմիածնի: Արդեամբք և ծախիւք տեսուն Սուրբապայ արքեպիսկոպոսի Պարգեանց: Վաղարշապատ, 1911, էջ 198:

¹² Նույն տեղում, թղթ. 39, վավ. 137:

¹³ Հ. Թումանյան, Երկեր, հ. 5, Եր., Հայպետհրատ, 1945, էջ 377:

⁸ Նույն տեղում, թղթ. 39, վավ. 60:

⁹ Նույն տեղում, թղթ. 39, վավ. 61:

¹⁰ Նույն տեղում, թղթ. 40, վավ. 39:

որ հավաքի Լոուիս այն բառերը, որոնք չեն մտել «Հայոց բառ ու բան»-ի մեջ ու այդ բառերի բացատրությունն ուղարկի իրեն: Նա չի մոռանում նաև այն, որ բացատրականում ցույց տրվի նաև բառի գործածության տեղը, գյուղի կամ քաղաքի անունը: Ամատունին նյութեր է հավաքել նաև երաժշտական խազերի, ժամակարգության, Օշականի եկեղեցու ու դպրոցի պատմության, ինչպես նաև «Հայոց եկեղեցու ժամակարգության պատմություն» ուսումնասիրությունների համար: Վերջինիս մասին մահվանից առաջ՝ 1917 թ. ապրիլի 21-ին Թիֆլիս, ճեմարանավարտ Գևորգ Գեանցեցյանին ուղղած նամակում գրում է. «Ես պարապում եմ այժմ Հայոց **եկեղեցվո ժամակարգության** պատմությամբ: Այս աշխատությանն մեջ իմ նպատակն է ընթերցողի առաջ դնել փաստորեն, թե մեր եկեղեցին Գ-րդ և Ե-րդ դարերում ինչ պաշտամունքներ առավ հույն և ասորի եկեղեցիներից, և հետևապես մեր Քարոզներից ու Աղոթքներից որո՞նք են, որոնք պատկանում են հույն եկեղեցվո հայրերին կամ Ասորվո եկեղեցվո հայրերի՞ն և որոնք են, որոնք գրել կամ հորինել են մեր եկեղեցաւեր հարելը...»:

Այս մեծ գործին ես ձեռնամուխ եմ եղել իմ աբեղայության օրերից և ինձ հալումաշ է արել բազում ձեռագրերի ուսումնասիրությամբ¹⁹:

Մակայն ցավոք արտի, անժամանակ մահը կիսատ թողեց Ամատունու տարիների քրոնաջան աշխատանքը և «Ժամակարգության պատմությունը» լույս չտեսավ:

Նա իր ամբողջ գիտակցական կյանքը անցկացնելով ս. Էջմիածնում, սրբությամբ պահեց հայ հոգևորականի ս. Էջմիածնի նկատմամբ ցուցաբերած դավաճոր հավատարմության անխախտ սկզբունքը և պարտաճանաչ ուղղության ավանդական ընթացքը:

Մեծ է նրա ավանդը հայկական ձայնագրության ու հայ մշակույթի պատմության ուսումնասիրման գործում: Նրա բեղմնավոր գրչին են պատկանում տասնյակ ուսումնասիրություններ, որոնց մի մասը լույս է տեսել զանազան պարբերականներում²⁰, առանձին գրքերով և մի զգալի մասն էլ անտիպ մնում է իր

արխիվում: Հրատարակված գործերից է նաև «Ժամակարգության մեկնություն իմաստասիրի Սիւնեաց եպիսկոպոսի» գիրքը, որը լույս է տեսել 1917 թ., Էջմիածնում, էջ 78:

Իր անձնական արխիվում ավարտուն վիճակում պահվում է նաև «Հայոց բառ ու բան» աշխատության լրացված ու վերամշակված սովոր հատորը:

Երևանի Մաշտոցյան մատենադարանում խնամքով պահվող Ամատունու արխիվում կան նաև ձայնագրյալ երգարաններ, առածների ժողովածուներ, բանահյուսության, ժամակարգության, հայոց շարականների վերաբերյալ մեծաքանակ նյութեր, հարյուրավոր էջանոց ձեռագիր անավարտ աշխատություններ՝ երաժշտական խազերի, ժամակարգության ու շարականների մասին և բազմապիսի այլ հարցերի վերաբերյալ նյութեր, հոգևորականներից ու մշակույթի նշանավոր գործիչներից ստացված նամակներ, լուսանկարներ:

Անճրածելու է ի մի բերել այդ բոլորը, ստուգել, ճշգրտել և քայլ առ քայլ հրապարակ հանել բազմաշխատ բանասերի արժեք ներկայացնող նյութերը:

Ուզում եմ եզրափակել իմ համեստ խոսքը ս. Էջմիածնի միաբան Սարգիս եպիսկոպոս Փիլոյանի՝ Ամատունուն գրած նամակի հետևյալ տողերով. «Դուք հայ բանասեր, Ձեր ծերության պեղարդ հասակին տոկուն ու անխոնջ համբերությամբ, մանրակրկիտ ու մեղվաջան աշխատությամբ ընկել եք հայ աշխարհի բանավոր բուրաստանի մեջ և անցնելով ծաղկե ծաղիկ, ժողովել եք նորա հարուստ հյութն ու նյութը, նորա առատ ուղն ու ծուծը և այն դյուրամարս ու քաղցրաճաշակ մեղր դարձնելով մատակարարում եք հայ բանասերներին, հայ ժողովրդին առհասարակ:

Քանի կան «հին շարականները» նորանք Ձեր կյանքը կերգեն, քանի կան «Հայոց բառ ու բան»-ը նորանք Ձեր սերը կքարոզեն...»²¹:


ՍԱՆԴՐՈ ԲԵՀԲՈՒԴՅԱՆ

¹⁹ Մատենադարան, Ա. վրդ. Ամատունու արխիվ, թղթ. 40, վավ. 74:

²⁰ «Էջմիածին» ամսագրում հրատարակվող «Արարատ» ամսագրի մատենագրության մեջ տրված լինելու կապակցությամբ Ամատունու՝ այնտեղ տպագրված հոդվածների ցանկը չենք ցույց տալիս:

²¹ Մատենադարան, Ա. վրդ. Ամատունու արխիվ, թղթ. 39, վավ. 164:





Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ԿԱՆԽԱԳՈՒՅՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

4. «Տէր ողորմեա» (Ստեղծող մանկանց)։
5. «Դասքըն հրէական»։
6. «Տէր ողորմեա» (Հափատր-ծանր, ԲԿ)։
7. «Տէր ողորմեա» (ծանր, ԱԿ և ԲԶ)։
9. «Կեցո Տէր, շնորհեա Տէր»։
10. «Տէր ողորմեա» (ծանր, ԲԿ)։

Այս եղանակները այլուստ հայտնի չեն մեզ։

«Ստեղծող մանկանց»-ը ծննդյան հիանալի երգ է, ինչպես երևում է խոսքերից էլ, և աչքի է ընկնում առնական ելևէջներով ու մածորային լուսավոր գունավորությամբ։

Առհասարակ ուշագրավ մի պարագա է, որ այստեղ ներկայացված ԲԿ երեք «Տէր ողորմեա»-ներն էլ մածորային են բնույթով ու անհատականացված են հնագույն հագվագյուտ գեղեցկության իրենց դարձվածք-

ներով, ի տարբերություն Ն. Թաշնյանի ձայնագրած ԲԿ «Տէր ողորմեա»-ների, որոնք միևնույնիսկ երանգ ունեն ու փոքր-ինչ համահարթեցված դարձվածքներ¹։

«Դասքըն հրէական»-ը միջնադարյան աչքի ընկնող տաղերից է, որը, ամենայն հավանականությամբ, պատկանում է Առաքել Սյունեցու բեղմնավոր գրչին²։

8-րդ և 11-րդ երգերը («Միաշաբաթ օր հանգստեան» ու «Բաց մեզ Տէր») լույս էին տեսել տակավին անցյալ տարի³։

¹ Տե՛ս Զայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, 1878, էջ 40, 41 և 68։

² Տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 4287, էջ 98ա, ուր երգը գաղափարված է «Առաքել տաղ Յարութեան» խորագրի տակ։


³ Տե՛ս «Էջմիածին», 1969, ԺԲ։

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի այս տարվա Բ համարից։


ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ

Իրանի Բկ

(Ստեղծող մանկաց)




Տէր ո - ղոր - մեա Տէր ո - ղոր - մեա
ի հրեշ - տա - կաց քա - ըր - զե - ցար



Ստեղ - ծող ման - կանց մա - ցուկ ցու - ցար




ի յան - քա - ցից
եւ ի հով - ուաց




մը - սուր ե - դար
փա - ռա - լո - ը - ցար




ընդ որս եկ մեզ ու-րա - խա - ցո




Շնորհիւ օրհ-նեալ ծը - ցըն -




- դեանք քո: ե - կայք ման-կունք ճոր Սի - օ - ցի



Տա-ցուք փա - ռը Տեառն ա -



- մե - ցի: Տէր ո -




- ղոր - մեա:

ԴԱՌԻՆԻ ՆՐԱԿԱՆ


Մանր Բն




Դաս - քըն հրե - ա - կան



ե - ին պա - հա - պան



սուրբ գե - ռեզ մա - Գից որ ե - դառ




մար - մից

ան - ցը - ման.

ՏԵՐ ԱՂԱՐԱՄԵԱ


Չափավոր-Մանր Բն



Տեր

ո


դոր-մեա



Տեր

ո - դոր


մեա



Տեր

ո

դոր - մեա






Տեր

ո - դոր

մեա:





ՏԵՐ ՈՂՈՐԱՅԱ

Թունը Իկ և Բա



ՏԵՐ ՈՂՈՐԱՅԱ

Թունը Իկ



ԿԵՑՈՒ ՏԵՐ, ՇՆՈՐՀԵԱՍ ՏԵՐ

Մանր Գծ


Կե - ցո Տեր. շնոր - հեա Տեր. շնոր -

- հեա Տեր. շնոր - հեա Տեր.

շնոր - հեա Տեր. Տեր ո - ղոր - մեա.

քեզ Տեառնդ յանձն ե - ղի - ցուք. Տեր ո - ղոր - մեա. Տեր

ո - ղոր - մեա, Տեր ո - ղոր - մեա:





Հ. Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՅԱԽԱՅՔԱՐ ՎԱՆՔԸ ԿԱՄ ՂՈՇԱՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԱՌՈՏ
ԱԿՆԱՐԿ

Յախացքար վանքը Հայաստանի հնագույն մենաստաններից է և հանդիսացել է Արևելյան Հայաստանի նշանավոր կրոնական կենտրոններից մեկը: Պատմական աղբյուրներում «բարձրահռչակ և սուրբ առաքինարան», «Հրեշտակաբնակ սուրբ ուխտ» և այլ բազմանշանակ անուններով է կոչվում, ինչպես և հավասարազոր նշվում է Տաթևի ու Ամաղու Նորավանքի մեծահռչակ վանքերին:

Յախացքար վանքը գտնվում է այժմյան Եղեգնաձորի շրջանում կամ պատմական Հայաստանի Սյունյաց նահանգի Վայոց ձոր գավառում: Վանքը տեղադրված է Եղեգիս գյուղից մոտավորապես երեք կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, բարձրավանդակաարահարթի վրա: Այդ գյուղը հնում կոչվել է Արտաբույնք, որն ավելի ուշ ձևափոխվել-դարձել է Էրդափին, իսկ այժմ վերակոչվել է Եղեգիս՝ նրանից ոչ հեռու գտնվող՝ Վայոց ձոր գավառի երբեմնի վարչական կենտրոն հանդիսացող Եղեգիս գյուղաքաղաքի անունով:

Մատենագրական, վիմագրական և հիշատակագրական աղբյուրներում տարբեր ձևով է կոչվում վանքը.—Յախացքար, Յախաքար, Յաղացքար, Յաղաց քար, Յաղաց քար. գրականության մեջ ավելի գործածականը «Յախացքար» ձևն է, ուստի մենք էլ կգործածենք այդ ձևը: Բացի այդ, վանքը բաղկացած լինելով կառուցվածքների երկու առանձին խմբերից, տեղացի բնակիչների կողմից կոչվել է նաև Ղոշա (զույգ) վանք:

Թե երբ է հիմնադրվել Յախացքար վանքը, ստույգ


հաշտնի չէ. պատմական աղբյուրներում հիշատակվում է Ե դարից՝ Վարդանանց պատերազմի կապակցությամբ: Ստեփանոս Օրբելյան պատմիչը տեղեկացնում է, որ Վարդանանց պատերազմի՝ Ավարայրի նշանավոր ճակատամարտի անհաջող ելքից հետո, հայոց բանակի մի զորախումբ, Մարտիրե զորավարի գլխավորությամբ, ցանկանում էր Վայոց ձոր գավառի վրայով անցնել Արցախ նահանգը: Բայց որովհետև հայկական այդ զորաբանակին հետապնդում էր պարսկական մի զորախումբ, ուստի այդ երկու զորախմբերի միջև Վայոց ձոր գավառի սահմաններում չորս խոշոր ճակատամարտեր են տեղի ունենում (հնագիտական հետազոտությունները որոշակիորեն պարզել են այդ ճակատամարտերի և նրանցում զոհված հայ մարտիկների մարմինների թաղման վայրերը): Չորրորդ ճակատամարտը տեղի է ունենում Արտաբույնք գյուղի և Յախացքար վանքի մոտակայքում. ահա թե ինչ է գրում այդ մասին պատմիչը.

«Եւ անդ ասպատակ եղեալ հասին և երեք հարիր արանց ի չրկիցն որ Ոստիքն կոչի և Արտաբույնք, և անդ զնոսա խողխողեցին, որոց վերայ յետոյ շինեցաւ եկեղեցի ի բնակչաց տեղեացն:

Եւ անտի սակաւ մի անցեալ Պարսկացն ի ձորադուռն սուրբ Յախացքար կոչեցեալ, որ ի վերայ բարձրաւանդակին ի մեջ սահմանաց երկուց գեղջն, որ վերոյ ասացաք, և անդ կոտորեալ յոյժ բազմութիւնք սեպուհ արանց և ընտիր զօրաց»¹:

¹ Պատմութիւն նահանգին Սիսական.—արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց. Թիֆլիս, 1910, էջ 69—70:

Շրջանային կենտրոն հանդիսացող Եղեգնաձոր ավանից դեպի Ալալյազ գյուղը (պատմական Եղեգիս գյուղաքաղաքը) գնացող ճանապարհորդը, Շատին գյուղից ոչ հեռու, ճանապարհի եզրին, իրոք Արդաբույնք (Եղեգիս) և Ոստինք (Հոստուն) գյուղերի



Նկ. 1. Ցախազքար վանք.—Արևմտյան խմբի ընդհանուր հատակագիծը

ջրաբաժան վայրում այժմ էլ կարող է նկատել այն եկեղեցու ավերակ շենքը, որը կառուցել էին տեղի բնակիչները այն հայ հերոս մարտիկների գերեզմանների վրա, որոնք իրենց կյանքը զոհեցին հայրենիքի ազատության ու անկախության համար պարսիկ նվաճողների դեմ մղած պայքարում՝ երրորդ ճակատամարտում։ Իսկ Եղեգիս գյուղից ներքև, խաղողի այգիների մեջ, Ցախազքար վանքից ոչ հեռու, պահպանված է դարին վերաբերվող հնագիտական բեկորները և դրանց կից հետազայում կառուցված փոքրիկ մատուռը վկայում են. «Անդ կոտորեալ յոյժ բազմութիւնք սեպուհ արանց և ընտիր զօրաց»՝ պարսիկների հետ ունեցած չորրորդ ճակատամարտում զոհված հայ քաջարի մարտիկների թաղման վայրի մասին։

Դրանից հետո ոչ մի տեղեկություն չկա Ցախազքար վանքի մասին մինչև Ժ դարը։ Ննչ վիճակի մեջ է եղել վանքը Ե դարից մինչև Ժ դարը, պարզ չէ։ Այն հանգամանքը, որ հնագիտական հետազոտությունները տեղում չեն հայտնաբերել այդ միջանկյալ ժամանակաշրջանին վերաբերող որևէ մնացորդ, ենթադրել է տալիս, որ վանքի սկզբնական կառուցվածքները ավերված լինեն արաբական արշավանքների ժամանակ, հավանաբար նրա առաջին շրջանում։

Ստեփանոս Տարոնացի պատմիչը խոսելով Աբաս Բագրատունու թագավորության ժամանակ (Աբաս Ա, 930—952) Հայաստանում կատարված շինարարական աշխատանքների և երկրում կառուցվող վանքերի մասին տեղեկացնում է, որ Ցախազքար վանքը

կառուցել է Տեր-Ստեփանոսը «...և Ցախազքար և Վաղոց Ջորի ի ձևոն հօր Ստեփանոսի»²։ Վանքի ա. Հովհաննես եկեղեցու վրա պահպանված 989 թվականն էլ ինքնին վկայում է, որ այդ ժամանակ գոյություն ունեւ էր շենքը և շենք էր վանքը։

Այնուհետև Ցախազքար վանքը հիշատակվում է ԺԱ դարում. նույն Ստեփանոս Օրբելյանը թվելով Սյունյաց նահանգում գոյություն ունեցող վանքերը, Վաղոց ձոր գավառում՝ ի թիվս մի շարք այլ վանքերի նշում է նաև Ցախազքար վանքը, ասելով. «Ցախազքար՝ բարձրահուշակ և սուրբ առաքինարան յորում ի 490 (1041) թվականին ի թագավորութանն Գագկայ, հայր ոմն Վարդիկ անուն շինե պաշտոն եկեղեցիս երկու ի հանգստարանի առաջին սուրբ հարցն, զմին գմբեթայարկ յանուն սրբոյ Կարապետին, և զմիւսն սագաշեն, հրաշալի յօրհնումովք»³։

Վանքի վրա փորագրված մի արձանագրության համաձայն (արձանագրություն ԺԹ) Ցախազքար վանքի առաջնորդ նույն Վարդիկը 1061 թվականին Զաքարեի որդի Վարդից մի այգի և հողաբաժին է ստանում՝ ի նվեր Ցախազքար վանքի։

Վանքի վրա փորագրված մի այլ արձանագրություն էլ հավաստում է (արձանագրություն Է), որ Ցախազքար վանքի առաջնորդ Գրիգոր վարդապետը 1222 թվականին վերանորոգել է վանքի ա. Աստվածածին եկեղեցին։ Իսկ վանքի վրա փորագրված մի ուրիշ արձանագրության համաձայն (արձանագրություն Դ) Սմբատի որդի Գրիգոր իշխանը, որը Ոստինք գյուղի (այժմ Հոստուն գյուղը Եղեգնաձորի շրջանում) տերն էր, 1211 թվականին երկու թառակ այգի է տնկում և նվիրում Ցախազքար վանքին։

Այդ նույն ԺԴ դարին վերաբերող Ցախազքար վանքի մասին հաջորդ տեղեկությանը մենք հանդիպում ենք Ստեփանոս Օրբելյանի մոտ, ըստ որի իշխան Տարսաին Օրբելյանը Գեղարքունի գավառում գտնվող իր ժառանգական սեփականությունը կազմող Գառնակեր գյուղը և մի այգի էլ Մանուկա (կամ Մճուկա) ձորում՝ նվիրում է Ցախազքար վանքին. անհրաժեշտ ենք գտնում մեջ բերել Օրբելյանի այդ վկայությունը.

«Սա (Տարսաին Օրբելյանը—Հ. Ե.) շինեաց Եկեղեցիս, և արար բազում արդիւնս ի վանորպս. ետ և ի վանն Ցաղաքարոյ՝ գիւղ ի Գեղարքունի գԳառնակերն. և այգի մի ի Մանուկայ ձորի, և գրե ինքեան արձան ի վերս սրբոյ Կարապետին. և կարգե պատարագս երիս՝ ամ յամէ. և փակե անագին նզովիս զի մի խախտեսցեն զհոգեցատուրն զայն»⁴։

Տարսաին Օրբելյանի՝ վերը մեջ բերված նվիրատվության մասին իրոք արձանագրված է ա. Կարապետ եկեղեցու վրա (արձանագրություն ԺԴ)։ Այս արձանագրության տարեթիվից պահպանվել է միայն հարյուրավոր թվանշանը՝ 2. (700), իսկ մյուս՝ տաս-

² Ստեփանոս վարդապետի Տարօնեցոյ, Տիեզերական պատմութիւն. Փարիզ, 1859, գլ. Գ, էջ 162։

³ Ստ. Օրբելյան, նույն տեղ, էջ 339—340։

⁴ Ստ. Օրբելյան, նույն տեղ, էջ 424—425։

նավոր և միավոր թվանշանները խիստ եղծված լինելու պատճառով անընթեռնելի են, ուստի որոշակի կերպով պարզ չէ այդ արձանագրության փորագրման ճիշտ ժամանակը: Բայց քանի որ Տաթևին իշխանը Սյունիքի կառավարիչ է դարձել 1251 թվականին և վախճանվել է 1290 թվականին, ապա դրանից էլ հետևելու է, որ վերը նշված արձանագրությունը պետք է փորագրված լինի 1251—1290 թվականների ժամանակամիջոցում, որի ընթացքում նա կատարած պետք է լինի՝ արձանագրության մեջ նշված նվիրատվությունները Ցախացքար վանքին:

տիեզերաքարով լուսավորչին, որդի իշխանաց իշխանին՝ քաջ սպառազեն մենամարտիկ զինաորի Ջալալին, թոն մեծ աթաբակին Հայոց և Վրաց վեհ Տաթևյիճին, տեր և վերատեսուչ գահերեց և զլուխ արհիերից Աթոռոյս Սինեաց Տաթևոյ և Նորավանից և Ցախացքարոյ, պետ երկուտասան զաւառաց, ուրախ եղև իբրև ընծայ ի վերուստ առաքեալ...:

Եւ այդ, եւ՝ նուաստ եղկելի թշուառացեալս Ստեփաննոս... աղաչեմ... յիշել զգեղաշէլ և զարեգակնափայլ եղբարն իմ զպարոն Շահնշահ...: Նաև յիշել զճնողսն իմ՝ զհայրն իմ Ջալալ և զմայրն իմ զամեն-



Նկ. 2. Ցախացքար վանք.—Արևմտյան խմբի ընդհանուր տեսարան արևելքից

Ցախացքար վանքի մասին հաշորդ տեղեկություններ, որը վերաբերվում է ԺԴ դարին, պարունակում է վանքի վրա փորագրված մի արձանագրություն (արձանագրություն ԺԸ), որի համաձայն Պողո իշխանի թոռ, Հասանի որդի Էաշին իր ժառանգական սեփականությունը կազմող Սրկղունք գյուղում եղած իրենց նորատունկ այգին 1317 թվականին նվիրում է Ցախացքար վանքին:

Այնուհետև Ցախացքար վանքը հիշատակվում է 1331 թվականին գրած մի ձեռագիր Ավետարանի հիշատակարանում, ուր հավասարության նշան է դրվում այդ ժամանակ գոյություն ունեցող և խոշոր ու նշանավոր կրոնական և ուսումնա-կրթական կենտրոններ հանդիսացող Տաթևի և Ամաղու Նորավանք վանքերի միջև. ահա այդ հիշատակարանը.

«...Աւետարանս ի ձեռն ուրումն երեք յաշխարհն Հայոց, գրեալ ոսկեզաւոյ որակաւք ի Դրագարկն ձեռամբ Թորոս փիլիսոփայի, զոր տեսեալ տեսոն Ստեփանոսի՝ հզար և իմաստուն գիտնականի, վարժեալ ի վարժարանի վարժապետին Եապեալ

արհնեալ Գոնցան, և երկար կենդանութիւն խնդրել երկուց եղբարց իմոց՝ պարոն Էլիկումին և Աղբորդային: Եղև մեզ այս բառք տրտմագին ի տանի զատկին. ի 22 թվ. (1331)»⁵:

Ապա Ցախացքար վանքի մասին հիշատակվում է 1367 թվականին վանքի վրա փորագրված մի այլ, ընդարձակ արձանագրության մեջ (արձանագրություն Թ):

Հետագա և վերջին տեղեկությունները Ցախացքար վանքի մասին վերաբերում են ԺԵ դարին: 26-ամյա թուրք-թաթարական անընդհատ շարունակվող արշավանքներից, որոնք անասելի աղետալի հետևանքներ ունեցան ողջ երկրում, Ցախացքար վանքը դեռ շարունակում էր պահպանել իր գոյությունը: Այդ մասին են վկայում նույն վանքում 1437 և 1463 թվականներին գրված շարականի ու Ավետարանի՝ Ցախացքար վանքի անցյալ պատմությանը վերաբերող այնքան

⁵ Լ. Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Երևան, 1950, էջ 231:

հետաքրքիր ու կարևոր փաստաթուղթ հանդիսացող հիշատակարանները, որոնք մեջ ենք բերում ստորև, հաջորդաբար.

«...Ավարտեցի (Շարակնց) դառն և ի նեղ ժամանակիս, որ տիրեալ էր աշխարհիս Հայոց ազգն թուրքման, որ և զամենայն աշխարհս ի սուր և ի սով և ի գերի մաշեաց, որ ոչ ուստեք ունէւք մխթարութիւն...»

Գերեցան գիրքս ի գաւառիս Եղեգեաց, ի վանքս Ղաղացքար, ընդ հովանեա կենսաբեր սուրբ նշանիս, և ի լաւ և լընտիր արիւնակէ Խլկցի, ձեռամբ Մատթէոս քահանայի, յիշատակ ինձ և ծնողաց իմոց... ի թլին Հայոց ՊԶԶ (1437)»⁶:

«Աւետարան գրել ի վանս Տաղաց-քար՝ ի Վայոց-Չոր գաւառի, ընդ հովանեա սուրբ Աստուածածնին և սուրբ Կարապետիս երկնանման կաթողիկէի, ի թոյին Հայկազեան տումարի ԶԺԲ (1463), ի կաթողիկոսութեան Տեր Զաքարիայի՝ Բ ամ, ի դանութեան Զհանշահին՝ ԽԿ ամ»⁷:

Դրանց հետո ոչ մի հիշատակություն չկա Յախացքար վանքի մասին, ուստի հայտնի չէ, թե երբ է ավերվել այն ու դադարել՝ որպես մենաստան գոյություն ունենալուց: Վերջին դարերի ճանապարհորդներն ու տեղագիրները վանքը գտել են ավերված ու լքված վիճակում:

Բ. ՎԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՏՄԱՃԱՐՍԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Յախացքար վանքը կամ Ղոշավանքը բաղկացած է հուշարձանների երկու առանձին խմբերից, արևելքից արևմուտք դասավորությամբ, բաոորդ կիլոմետրաչափ միմյանցից հեռու:

Արևմտյան խումբ

Հուշարձանների այդ խումբը, որը համեմատաբար բարձր դիրք ունի և գտնվում է խորունկ ու ընդարձակ ձորի եզրին և ամենահինն է, բաղկացած է երկու եկեղեցուց, մեկ գավթից, երկու սրահից, մեկ մատուռից, երկու ձիթհանից, պարսպապատ է, կից տարածվում է փոքրիկ գերեզմանոց (նկ. 1): Չնայած վանքը պատմական աղբյուրներում հիշատակվում է Ե դարից, սակայն տեղում պահպանված կառուցվածքները Ժ դարից այն կողմ չեն անցնում:

1. **Աստվածածին եկեղեցի.**—Վանքի այդ խմբի գլխավոր եկեղեցին է. կառուցման ճիշտ ժամանակը որոշ չէ, սակայն վերը մեջ բերված Ստեփանոս Տարոնացու վկայությունից պարզ է դառնում, որ եկեղեցին պետք է կառուցված լինի Արաքս Ա Բագրատունու թագավորության ժամանակ՝ 930—952 թվականներ

ժամանակամիջոցում: Հուշարձանի կառուցման ճարտարապետական ձևերը նույնպես ապացուցում են, որ այն անվիզելիորեն վերաբերում է Ժ դարին: Դրանից էլ հետևում է, որ Յախացքար վանքի սկզբնական կառուցվածքները հիմնովին ավերվել, վեր են անվել փլատակների ու ծածկվել հողի հաստ շերտով, և այդ փլատակների վրա կառուցվել է ներկայիս վանքը:

Աստվածածին եկեղեցու շենքը կենտրոնացմբ է ձևի մի կառուցվածք է, որի հատակագիծը արտաքուստ քիչ երկարաձիգ, ուղիղ քառանկյունի ձև ունի, իսկ ներսից՝ շնորհիվ անկյուններում տեղադրված խորանների, հատակագիծը ստացել է խաչաձև տեսք՝ կիսակլոր խաչքներով: Արևելյան խաչքնում տեղադրված է ցածրիկ բնոք:

Արևելյան կողմի խորանների հատակագիծը եռկարաձիգ, ուղիղ քառանկյունի է, դրանցից հարավ սյուն կողմի խորանի դուռը բացվում է դեպի արևմուտք, եկեղեցու այդ կողմի խաչքի մեջ, իսկ հյուսիսային կողմի խորանի դուռը՝ դեպի հարավ, արևելյան արքիդի մեջ, բնոքի վրա: Արևմտյան կողմի խորաններն արևելյան արևելյան կողմից ունեն կիսակլոր փոքր արքիդներ, նրանց մուտքերը բացվում են եկեղեցու արևմտյան խաչքի մեջ՝ իրար դիմաց:

Երկու մուտքերից մեկը բացվում է դեպի արևմուտք, իսկ մյուսը՝ դեպի հարավ՝ համապատասխան խաչքների կենտրոնական մասերի՝ այդ կողմերում գտնվող սրահաձև գավթիների մեջ:

Վեց լուսամուտներից մեկական հատ բացվում է հուշարձանի արևելյան և արևմտյան խաչքների վերի մասերից, ըստ որի արևելյան խաչքնում բացվող լուսամուտը խիստ բարձր է ու լայն, իսկ արևմտյան խաչքնում բացվող լուսամուտը ցածրիկ է ու նեղ: Մեկական շատ փոքր լուսամուտներ էլ բացվում են սամուտը խիստ բարձր է ու լայն, իսկ արևմտյան խորանների արևմտյան կողմից: Արևելյան արքիդի և դրան կից խորանների պատերում փորված են դարաձև կից փոքր խորշեր՝ ոմանք ուղղանկյուն, ոմանք կամարակապ գազարով:

Ներսից, խաչքների միացման անկյուններից ձգվող կիսապուրկները միանալով կամարներով իրենց վրա են կրել գմբեթը:

Եկեղեցու շենքը 1222 թվականին վերանորոգել է վանքի առաջնորդ Գրիգոր վարդապետը, ինչպես այդ մասին վկայում է վանքի վրա փորագրված արձանագրությունը (արձանագրություն է):

Հուշարձանն ավերակ վիճակում է. ամբողջովին քանդված է գմբեթը, ծածկը, արևելյան արքիդի կոնխի տանիքը, հյուսիս-արևելյան պատը և անկյան խորանի արևելյան և հյուսիս-արևմտյան անկյան խորանի հյուսիսային պատը: Կանգուն մնացած մասերը շարված են տեղական զանազան հանքաքարի տարբեր մեծությամբ անմշակ քարերով՝ կրաշաղախի միացությամբ:

2. **Գավթիք.**—Գտնվում է Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմում, նրան կից: Խիստ երկարաձիգ ու նեղ, սրահաձև մի կառուցվածք է, ամբողջովին ավերակ վիճակում, պահպանվել է միայն հյուսիս-

⁶ Լ. Ս. Խաչիկյան, Ժ-Ե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, Երևան, 1955, էջ 472—73:

⁷ Լ. Ս. Խաչիկյան, նույն տեղ, մասն երկրորդ, էջ 195—96:

յին պատը, որի վերին քարաշարերը նույնպես քանդված են, և մյուս պատերի հիմնամասերի որոշ հետքեր: Հյուսիսային պատի մեջ, ներսից բացվում են հինգ լայն ու խորը կամարակապ մեծ խորշեր: Այդ խորշերը բաժանող ելուստապատերի ծայրերից ձգվող ամուրները և նրանց ծայրերին պահպանվող կամարաձև քարերը վկայում են, որ գավթի ծածկը եղել է թաղակապ, և որ հարավային պատի մեջ նույնպես բացվելիս են եղել նույնաձև և նույն քանակի խորշեր՝ իրենց անջատող ելուստապատերով ու ամուրներով, իսկ վերջիններս միացած են եղել ծածկի թաղը գոտկալ կամարներով: Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ պատի կենտրոնական մասից:

Հուշարձանի կանգուն մնացած մասերը, ընդհանուր առմամբ, շարված են անմշակ որձաքարերով՝ կրաշագանակի միացությամբ, իսկ պատերի մեջ բացված խորշերի եզրերն ու կամարները, ինչպես և արևելյան պատի արտաքին երեսապատի որոշ մասերը շարված են մարմուր տաշված որձաքարերով:

Թե երբ է կառուցվել այդ հետաքրքիր շենքը, ստույգ հայտնի չէ: Այն հանգամանքը, որ դա կից է աստվածածին եկեղեցու շենքին և կառուցելիս փակվել է եկեղեցու հյուսիս-արևմտյան անկյան խորանի՝ դեպի արևմուտք բացվող լուսամուտը, ինքնին վկայում է այն մասին, որ գավթի-սրահը կառուցվել է եկեղեցուց հետո, սակայն ամենայն հավանականությամբ ոչ ուշ, քան մինչև ԺԲ դարը: Հուշարձանի քանդված մասերը փլատակների ձևով թափված են տեղում:

3. **Երկու սրահներից մեկը** գտնվում է Աստվածածին եկեղեցու հարավային կողմում, կից՝ նրա ամբողջ երկարությամբ: Սրահներին բնորոշ և հատուկ ձևով կառուցված այդ շենքը հյուսիսային կողմից առանձին պատ չունի, այլ եկեղեցու հարավային պատին՝ կից ձգվում են հինգ ուղղանկյուն որմնամույթեր, որոնք միանալով որմնակամարներով, պատի վրա առաջացնում են լայն խորշեր: Հարավային կողմից ամբողջական ներփակ պատի փոխարեն ունի երեք կամարակապ մեծ բացվածքներ ունեցող պատ: Արևմտյան կողմից բոլորովին պատ չունի, այլ կամարակապ բացվածք է՝ սրահի ամբողջ լայնությամբ:

Սրահի արևելյան ծայրում կա մի փոքր քառակուսանի տարածություն, որը հատուկ միջնորմով անջատված է ընդհանուր սրահից և վերջինիս հետ հսկողակցվում է միջնորմի մեջ բացված փոքրիկ մուտքով: Այդ քառակուսան մասի արևելյան պատի մեջ բացվում է մի փոքրիկ լուսամուտ:

Հուշարձանի ծածկը թաղակապ է, հյուսիսային կողմի որմնամույթերից ձգվող կամարների ծայրերը հենվում են հարավային պատի մեջ ագուցված կալուցակների վրա, միաժամանակ գոտկելով ծածկի թաղը կամ առաստաղը:

Ամբողջ շենքը շարված է մոխրագույն բազալտի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղակի միացությամբ:

Կանգուն է՝ մասնակի քանդումներով: Այս հուշարձանի կառուցման ժամանակը, ինչպես և կառուցողները նույնպես հայտնի չեն:

4. **Ս. Հովհաննես եկեղեցի.**—Գտնվում է վերը նկարագրված հուշարձանների հարավային կողմում, հարյուր սրահի ամբողջ երկարությամբ և նրանից անջատվում է պարսպի դարպասի ընդհանուր սրահով: Կառուցման վերաբերյալ որոշակի տեղեկություն չկա:



Նկ. 3. Ցախացքար վանք.—Ս. Կարապետ եկեղեցին արևելքից

սակայն նրա արևելյան պատի արտաքին երեսի վրա փորագրված ՆԼԸ (989) թվականը ենթադրել է տալիս, որ եկեղեցին պետք է կառուցված լինի հենց այդ թվականին:

Յուրահատուկ ձևով կառուցված այդ շենքը ունի երկարաձիգ ուղիղ քառանկյունի հատակագիծ, ծածկը թաղակապ է, արևելյան ծայրում ունի կիսակլոր արսիդ: Երկու խորանները, որոնք ունեն ուղիղ քառանկյունի հատակագիծ և առանց արսիդի են, տեղադրված են հարավային պատին կից՝ նրա արևելյան և արևմտյան ծայրերում, այնպես որ նրանց արանքում, հարավային պատի կենտրոնական մասի հավասարությամբ գոյացել է մի լայն, կամարակապ մեծ խորշ: Երկու խորանների մուտքերն էլ բացվում են դեպի հյուսիս. արևելյան խորանինը՝ արսիդի մեջ, իսկ արևմտյան խորանինը՝ եկեղեցու, վերջինիս արևմտյան պատին կից:

Եկեղեցու ներսից՝ հյուսիսային պատին կից և արևմտյան խորանի արևելյան պատի հյուսիսային ծայրից ձգվում են ուղղանկյուն որմնամույթեր, որոնք միանալով կամարով գոտկում են ծածկի թաղը: Հյուսիսա-

յին պատի կենտրոնական մասում փորված է քառակուսան հիմք խորշ:

Միակ մուտքը արևմտյան կողմից է. երեք լուսամուտներից մեկը բացվում է հարավային պատի կենտրոնական մասից, մեկը՝ արևելյան արքիդից, և մեկն էլ՝ արևելյան խորանի արևելյան պատից:



Նկ. 4. Յախացքար վանք.—Ս. Կարապետ եկեղեցին հյուսիսից

Ամբողջ հուշարձանը շարված է զանազան հանքաքարի տարրեր մեծությամբ անտաշ քարերով՝ կրաշաղախով միաձուլված: Կիսավեր վիճակում է. ամբողջապես քանդված է ծածկը, հարավային, արևելյան և արևմտյան պատերի վերևի մի քանի քարաշարերը և խորանների վերի մասերը: Քանդված մասերը փլատակների ձևով թափված են հուշարձանի ներքև և շուրջը:

5. **Մատուռ.**—Գտնվում է ս. Հովհաննես եկեղեցու հարավային կողմում, հիմնովին ավերակ վիճակում: Պահպանված հիմնապատերից, որոնք շարված են անմշակ որձաքարերով, նկատվում է, որ սուրբական ձևով կառուցված փոքր մատուռ է եղել: Արևելյան կողմից ունեցել է կիսակլոր արքիդ. միակ մուտքը հարավային կողմից է, նկատվում է, որ մուտքի եզրերը շարված են եղել մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախով:

6. **Պարխայ.**—Չգտնվում է հուշարձանների այդ խմբի շուրջը, գրեթե քառակուսի ձևով: Պահպանվել է միայն արևելյան պատը, որն ուղիղ գծով ընդհանուր

և կից է վերը նկարագրված հուշարձանների արևելյան պատերին, բացի գավիթ-սրահից. պարսպի մյուս պատերը հիմնովին քանդված են և հազիվ նկատելի հետքեր են երևում (նկ. 2):

Պարսպի պահպանված արևելյան պատը շարված է ամրագույն բազալտի սրբատաշ քարերով՝ կրաշաղախով: Գլխավոր մուտքը այդ պատի կենտրոնական մասից է՝ ս. Հովհաննես եկեղեցու և առաջին սրահի արանքից՝ լայն ու կամարակապ դարպասի ձևով, արտաքուստ գեղեցիկ քիվավոր ճակատով:

Բացի դարպասից, պարսպի այդ մուտքը սրահան է, որը հանդիսանում է հուշարձանների տվյալ խմբի մեջ մտնող երկրորդ սրահը: Վերջինս բաժանակնի մեծ է՝ ս. Հովհաննես եկեղեցու և առաջին սրահի անբողջ երկարությամբ: Ծածկը թաղակապ է, որի եզրերն անմիջապես հենվում են՝ արևելյան մասում ս. Հովհաննես եկեղեցու հյուսիսային պատին կից, արքիդի երկարությամբ և ամբողջ սրահի քառակուսան մասի հարավային պատին կից կառուցած պատերի վրա, իսկ մնացած մասում ս. Հովհաննես եկեղեցու հյուսիսային և առաջին սրահի հարավային պատերի մնացած մասերի վրա:

Այս սրահը նույնպես շարված է ամուր բազալտի մաքուր տաշված քարերով, կրաշաղախով, ըստ որի պատերի ներսի երեսները պատած են բազմաթիվ խաչերի քանդակներով և վիմագիր արանագրություններով:

Պարսպի, ինչպես և այդ վերջին՝ երկրորդ սրահի կառուցման ժամանակը և ուժեր են եղել նրանց կառուցողները, ստույգ հայտնի չէ: Դիտելով պարսպի արևելյան պատի տեղադրությունը և նրա վրա փորագրված արձանագրությունների տարբերվելը, պարզ է դառնում, որ դրանք պետք է կառուցված լինեն ԺԲ դարում, համեմայն դեպք ոչ ուշ, քան ԺԳ դարի սկզբներին:

7. **Երկու ձիթհանները** գտնվում են նկարագրված հուշարձանախմբի արևմտյան կողմում, պարսպի ներսում: Երկուսն էլ հիմնովին ավերակ վիճակում են, որոնց շենքերի հազիվ նկատելի հետքերն են երևում՝ փոսերի ձևով, ուր ընկած են ձիթապտուղը տրորող երկու կլոր մեծ քարերը:

8. **Գերեզմանոցը** նույնպես տարածվում է հուշարձանների խմբի արևմտյան կողմում, պարսպի ներսում: Վերջինս նույնպես ավերակ վիճակում է, նշկատվում են այս ու այն կողմ թափված առանձին գերեզմանաքարեր և խաչքարերի քանդակազարդ բեկորներ:

9. **Վանական միաբանության բնակելի շենքեր.**—Գտնվում են պարսպի ներսում, արևմտյան պատին կից: Բոլորն էլ ավերվել ու վեր են ածվել փլատակների կույտերի, որոնց մեջ նկատելի է մի քարի պլան գլանաձև հաստ բունը և խարխուլը:

Յախացքար մենաստանի մյուս՝ արևելյան խումբը

Հուշարձանների այդ խումբը բաղկացած է երկու եկեղեցուց և մեկ գավթից. կից կան մի քանի գերեզմանարձան-խաչքարեր:

Այս երկու եկեղեցիներն էլ, ինչպես այդ մասին տեղեկացնում է Ստեփանոս Օրբելյան պատմիչը, կառուցել է Վարդիկ վարդապետը 1041 թվականին, որը հավանաբար վանքի առաջնորդը եղած լինի:

վաճք է, որի հատակագիծը արտաքուստ քիչ երկարաձիգ ուղիղ քառանկյունի է, իսկ ներսից՝ շնորհիվ անկյուններում տեղադրված մեկական խորանների, ստացել է խաչաձև տեսք՝ ուղղանկյուն խաչքներով:



Նկ. 5. Ցախացքար վանք.—Ս. Նշան եկեղեցի՝ հարավ-արևմուտքից

«Ցախացքար՝ բարձրահուշակ և սուրբ առաքինարան յորում ի 490 թվականին (Հայոց) ի թագաւորութեանն Գագկայ, հայր ոմն Վարդիկ անուն շինե պալծաւ եկեղեցիս երկու ի հանգստարանի առաջին սուրբ հարցն, զմին գմբեթալարկ յանուն սուրբ Կարապետին, և զմիւսն սագաշեն, հրաշալի յօրինուածովք»⁸:

Եվ իրոք, այդ եկեղեցիներից մեկը գմբեթավոր է, իսկ մյուսը՝ սագաշեն, այսինքն՝ թաղակապ ծածկով, և կառուցված են «հրաշալի յօրինուածովք», դասվելով հայ ճարտարապետության հույակապ ու անգուգական կոթողների շարքը:

Բացի այդ, Ստեփանոս Օրբելյանից վերը մեջ բերված հատվածում առանձնապես հետաքրքիր է նրա այն վկայությունը, որի համաձայն այդ եկեղեցիները կառուցված են «Ի հանգստարանի առաջին սուրբ հարցն», այսինքն այն վայրում, ուր թաղված են եղել նրա՝ մինչև վերակառուցումը եղած առաջնորդների և վանքի միաբանության առաջատար կրոնավորների մարմինները:

10. Ս. Կարապետ եկեղեցի.—ԺԱ դարին խիստ բնորոշ և իր կառուցողական ձևերով այնքան հետաքրքիր այդ հուշարձանը գմբեթավոր մի կառուց-

Արևելյան խաչքներում տեղադրված է կիսակլոր արսի-դը՝ բարձր ու մասամբ դուրս շեշտված բեմով ու վեմբարով:

Բոլոր խորաններն էլ արևելյան կողմից ունեն կիսակլոր փոքր արսիդներ: Արևելյան կողմից խորանների մուտքերը բացվում են դեպի արևմուտք՝ համապատասխանաբար հարավային և հյուսիսային խաչքներում, իսկ արևմտյան կողմի խորանների մուտքերը՝ այդ կողմի խաչքի մեջ՝ իրար դիմաց:

Խաչքների միացման անկյուններից ձգվող գլանաձև կիսապուները միանալով կամարներով կազմում են թաղակապ ծածկը, իրենց վրա կրելով գմբեթը՝ կլոր թմբուկով և ցածրանիստ վեղարով: Գմբեթի թմբուկի ամենավերին՝ քիվերին կից մասը եզրափակվում է երկրաչափական ձևերի զարդաքանդակներ ունեցող լայն շերտով:

Միակ մուտքը հարավային կողմից է՝ խաչքի կենտրոնական մասից՝ կիսակլոր ճակատակալ մեծ քարով ու գեղազարդ քանդակներ ունեցող պարակալով (շրջանակ): Գոյություն ունեցող ինը հատ լուսամուտներից երեքական հատ բացվում են արևելյան և արևմտյան պատերից, որոնցից մեկական հատ՝ խորանների մեջ և մեկական հատ էլ՝ արևելյան ու արևմտյան խաչքների մեջ, ապա մեկ հատ՝ հարս-

⁸ Ստ. Օրբելյան, նույն տեղ, էջ 339—40:

վային պատի մեջ՝ մուտքից վերև, և երկու հատ էլ՝ գմբեթի թմբուկի մեջ: Խաչքների և գմբեթի թմբուկի մեջ բացվող լուսամուտները մեծ են, բարձր ու լայն, իսկ խորանների մեջ բացվող լուսամուտները խիստ փոքր են: Բացի վերը նշված լուսամուտներից մի կտոր լուսանցք էլ բացվում է հարավային պատի ճակատային մասից:

Եկեղեցու լուսամուտներն ու կտոր լուսանցքն ունեն գեղեցկագարդ շրջանակներ, իսկ գմբեթի թմբուկի և խորանների լուսամուտները՝ պսակներ, ըստ որի զարդաքանդակները բուսական ու երկրաչափական բնույթի են՝ հյուսվածքաձև, վարդաձև, գնդիկավոր-մարգարտաշար և այլն, որոնք մշակված են շատ նորրոք ու գեղեցիկ ձևով (նկ. 3):

Բացի վերը նկարագրած զարդաքանդակներից, հուշարձանի պատերն արտաքուստ զարդարված են տարբեր բնույթի այլ քանդակներով, որոնց մեջ աչքի են ընկնում տարբեր ձևերով մշակված խաչաձև քանդակները: Խիստ բնորոշ և հետաքրքիր է հյուսիսային պատի ճակատամասում եղած մեծ բարձրաքանդակը, որ պատկերված է աղյուծ՝ ճանկերի մեջ առած մի մեծ կենդանի (եզ կամ գոմեշ, նկ. 4): Արևելյան և հարավային պատերի մեջ, արտաքուստ կամ երկուսն էլ եռանկյունաձև խորն ու մեծ խորշեր (նիշեր), որոնց կամարակապ գագաթները պատած են զանազան բնույթի գեղեցիկ զարդաքանդակներով:

Ամբողջ հուշարձանը կառուցված է գորշ գույնի բազալտի սրբատաշ մեծ քարերով՝ կրաշաղախի միացությամբ:

11. Մենաստանի այս խմբի երկրորդ եկեղեցին, որն արձանագրությունների մեջ կոչվում է Ս. Նշան, գտնվում է ս. Կարապետ եկեղեցու արևելյան կողմում: Սա միանավ բազիլիկ ձևով կառուցված մի փոքրիկ շենք է, շարված գորշագույն բազալտի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախով: Արևելյան կողմից ունի կիսակլոր փոքր արսիդ՝ ցածրադիր բլմով ու վեմքարով: Միակ փոքրիկ պարզ մուտքը արևմտյան կողմից է, որը բացվում է գավթի մեջ: Մի փոքր կլոր լուսանցք բացվում է արևելյան կողմից՝ արսիդի մեջ: Սալահատակված է, տանիքը պատած է սալաքարերով, որոնց մեծագույն մասը թափված է:

12. Գավթիքը, որը գտնվում է ս. Նշան եկեղեցու արևմտյան կողմում՝ կից, շատ փոքր է, քառակուսի հատակագծով, հանդիսանում է եկեղեցու անբաժանելի մասը՝ որպես մի տեսակ նախասրահ: Այդ վերջին հանգամանքը հավանական է դարձնում, որ գավթիքը պետք է կառուցված լինի եկեղեցու հետ միաժամանակ, այսինքն՝ 1041 թվականին:

Գավթիքը նույնպես շարված է գորշագույն բազալտի մաքուր տաշած քարով, կրաշաղախով միաձուլված: Ծածկի առաստաղը հարթ մակերեսով է և ամբողջապես պատած է աստղաձև ճրքագեղ զարդաքանդակներով: Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ կամարակապ ճակատով:

Արևմտյան պատին կից, արտաքուստ, մուտքի երկու կողմերում, նույն գորշագույն տուֆի սրբատաշ մեծ քարերով, դռան բարձրության հավասար, հետա-

գայում կառուցված է ընդհանուր պատվանդան, որի արտաքին եզրերին կանգնեցրած են երկու խոշոր խաչքարեր: Վերջիններս շքեղ քանդակազարդված են, ըստ որի արտաքին եզրերի քանդակները երկրաչափական բնույթի են՝ քառակուսիների մեջ վերցրած, իսկ ներսի մասի՝ խաչի ու նրան՝ հարակցվող մասերի քանդակները բուսական-ժողկազարդ բնույթի են: Բոլորն էլ մշակված են շատ գեղեցիկ և վերին աստիճանի նորրոք ձևով:

Երկու խաչքարերի արանքում ստեղծված է բարձր ու լայն, ուղղանկյուն խորշ՝ զույգ կամարաձև գագաթով: Այդ խորշի հյուսիսային եզրաշերտի ծայրին հենած գեղաձև պատվանդանը և խորշի ճակատամասի շարվածքները հավաստի են դարձնում, որ գավթի արևմտյան պատին կից այդ ամբողջ կառուցումը յուրահատուկ մի կոթող է, ըստ որի խորշի կառուցման կոնստրուկցիան որոշակի կերպով հիշեցնում է Սիսիանի շրջանի Աղուդի գյուղում եղած կոթողը: Դրանցից էլ հետևում է, որ այս գավթիքը պետք է հանդիսացած լինի որպես դամբանատուն:

13. Մատուռ.—Վերը նկարագրված գավթի և մասամբ ս. Նշան եկեղեցու տանիքների վրա, կոթողաձեղ կառուցվածքին կից, շինված է մի շատ փոքր մատուռ: Սրա հատակագիծը ուղիղ քառանկյունի է, ծածկը՝ թաղակապ, արևելյան կողմից ունի փոքրիկ արսիդ, որ բացվում է նաև մի շատ փոքր լուսամուտ: Կառուցված է նույն գորշագույն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախով, տանիքը պատած է սալաքարերով:

14. Գերեզմանոց.—Տարածվում է ս. Կարապետ և ս. Նշան եկեղեցիների շուրջը: Գերեզմանաքարերը բոլորն էլ նույն գորշ գույնի բազալտից են, շատ մեծ և տարբեր ձևերով մշակված, ինչպես օրինակ՝ քառակող հարթ երեսով, օրորոցաձև և եռանկյունաձև տանիքներով՝ բարձրադիր և այլն:

Գերեզմանոցում կան բազմաթիվ խաչքարեր, ոմանք բավականին մեծ, որոնք սովորական ձևով շքեղորեն քանդակազարդված են: Դրանցից չորս հատ կանգուն վիճակում գտնվում են ս. Կարապետ եկեղեցու հարավային կողմում:

Նկատվում է, որ բավականին ընդարձակ գերեզմանատուն է եղել, իսկ այժմ գտնվում է քայքայված ու ավերակ վիճակում, նրա մի մասը քանդել և վեր են ածել վարելահողերի, որ գերեզմանաքարերն ու խաչքարերը տեղահան արել և կուտակել են այս ու այն կողմում: Գերեզմանոցի մնացած մասի տապալանաքարերից ոմանք տեղաշարժված են, իսկ խաչքարերը՝ վար ընկած գետնին: Տեղում պահպանված Գերեզմանաքարերը թաղված են գետնի մեջ և մեծ մասամբ ծածկված են հողով: Գերեզմանաքարերի և խաչքարերի զարդաքանդակների մշակման ձևերը բնորոշ են Ժ—ԺԵ դարերին:

Գ. ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցախացքար վանքի հուշարձանների վրա փորագրված արձանագրությունները բավականին մեծ թիվ են կազմել, սակայն դրանց մի մասն է միայն պահպանվել: Արձանագրությունների որոշ մասը, որոնք

փորագրված են եղել քանդված մասերի վրա, չենքք քանդվելու ընթացքում ջարդոտվել են և վեր ածվել փլատակների, ծածկվել հողի հաստ շերտով: Նկատելի է նաև, որ հուշարձանների կանգուն մասերի վրա փորագրված որոշ արձանագրություններ էլ հետագայում ծածկվել են այդ փլատակներով ու հողմերի կուտակված հողի հաստ շերտով, որոնք պեղել-բացելուց հետո հնարավոր կլինի ընդօրինակել:

Մեջ ենք բերում առկա պահպանված արձանագրությունները՝ վերծանված ձևով, պահպանելով տողերի դասակարգման ձևը:

Արևմտյան խումբ

Ա. Աստվածածին եկեղեցու հարավային կողմի սրահի արևելյան պատի վրա, արտաքուստ.

1. Յանուն Աստուծոյ եւ Վարդան միաբան—
2. եցա ի սուրբ Ուխտս եւ ետու զիմ տերունի
3. Սուրբ Նշանն եւ գրակալք. եւ միաբանքս
4. սահմանեցին Բ ար պատարագ ի տ—
5. աւնի սուրբ Գեվորգին: Կատարիչքն արհմն—
6. ին յաստուծոյ եւ խափանիչքն դատին:

Բ. Նույն սրահի ներսի կամարի վրա.

Գրիգոր քահանայ յիշեցէք ի քրիստոս:

Գ. Նույն Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմի գավիթ-սրահում եղած մի տապանաքարի վրա.

Ջազնին լընտրեալսն և զբաշնքի զարկանսն զպարոն Ուքանն յիշեցէք. թվին 22Է (1326):

Դ. Ա. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՏՔԻ ԾԱԿԱՍՏԱԿԱԼ ԲԱՐԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ

1. Թ:Ո:Կ (1211), եւ Գրիգ—
2. որ որդի Սմբատս Ու—
3. տնի տէր գերկու Դոնիս տ—
4. նկեցի ետու սուրբ Յովանէ—
5. ս, գրեցա ի տարին: ԺԲ աւ—
6. ր ժամ. որ գրոյս հակառ—
7. ակի. Յ. Ժ. Ը. Հայրապետ—
8. աքն ճգոված եղիցի:

Ե. ՆՈՒՅՆ Ա. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ
ԹՎ. ՆԼԸ (989)

Զ. ՆՈՒՅՆ Ա. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԻՎԻ ԲԵԿՈՐՆԵՐԻ ՎՐԱ

1. Սուրբ ուխտիս կամակցու (թեամբ)....—
2. ս տուեցի սուրբ Յո—
3. վանէս՝ Աղաւոր յիշեցեք:

Է. ՊԱՐՍՊԻ ԴԱՐՊԱՍԱՊԱՏԻ ԾԱԿԱՍՏԻՆ

1. Թ. ՈՀԱ (1222) նորոգեցաւ սուրբ Աստուածածինս ի ձեռն Գրիգորոյ և սուրբ Հարքս:

2. Գրեցին իւր տանիս Ա. ժամ. կատարիչ հ(րաւանիս) արհմնն յԱստուծոյ:

Ը. ՆՈՒՅՆ ԴԱՐՊԱՍԻ ՍՐԱՀԻ ՆԵՐՍՈՒՄ՝ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ

1. Կաման Աստուծոյ, եւ Էաշի, որդի Հասանա, թոռն Պոռ
2. շայ միաբանեցաւ սուրբ ուխտիս Յաղաց քարո
3. և ետու յիմ հայրենեաց ի Սրկղունս զմեր
4. ձեռատունկ այգին նորակերտ իւր ջրովն:
5. Մեր եղբայրն՝ տեր Արպելի Ովանէն և միաբանքն
6. ի տարին սահմանեցին: Դ: պատարագ մեզ եւ
7. ծնողաց մերոց, ամուսնոյն իմոյ
8. Մամախաթունին՝ ի տունի Դավթի և Յակոբա:
9. Կատարիչքն արհմնն յԱստուծոյ:
10. Ի թվ. 24Զ (1317):

Թ. ՆՈՒՅՆ ՏԵՂ, ՆԱԽՈՐԴԻ ՄՈՏ

1. Կաման Աստուծոյ, իշխանութեամբ Իւանէի, Հայրապետ—
2. ութեամբ Տեր Ներսէսի, եւ Էնսոս, որդի Սամանայ, ամուսին
3. իմ Արուգխաթունս թաղեցաք մեր Սամսոն որդիս ի վա—
4. նքս. մեր էլ գերեզման հարաք, մատաղ արարաք և էաք մեր
5. առ Քրիստոս ի հրեշտակաբնակ սուրբ ուխտս Յաղանի քար մեծ
6. պարոնաց հրամանաւ Արտաքինեցիք Մովսիս Արծախեց—
7. ին ամէն հարկէ ազատ. Սիրկանց այգին գնին Բուրղա թուրքին պարտքն արհմ գերել
8. ողջ... գերի թափեցին, այգիս չարեքն իմ եղբարն տվաք: Գ: չարեքս: Ա: իմ հոգոյս, Ա: Արու—
9. զխաթունի, :Հ: Ա: Սամսոնա, :Հ: Գ: տվաք ի սուրբ Յովհաննէս վասն ծովացեալ մեղաց մերոց: Սպաս—
10. աւոր Ներսէս (և) այլ միաբանքս տարին :Զ: պատարագ տվին մեզ (և) ծնողաց մերոց: Ով հակառակի՝ դ—
11. ատի Աստուծոյ՝ ամեն. քածին Ուղաին (և) այլ խաչահանացն առցէ: Թ: Պ: Ժ: Զ: (1367):

Ժ. ՆՈՒՅՆ ՍՐԱՀԻ ՆԵՐՍՈՒՄ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ Ի ԹՎԻՆ 24Զ (1317)

1. Կաման Աստուծոյ եւ Գրարիկ միաբանեցաւ սուրբ Ու—
2. խտիս Յաղաց քարո և ետու ի հալալ ընչից
3. Իմոց Ստեփանէք զԱրլականց այգոյն (արձանագրության շարունակությունը ծածկված է փլատակներով):

Արևելյան խումբ

ԺԱ. Ա. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՏՔԻ ԾԱԿԱՍՏԱԿԱԼ ՎՐԱ

1. Ողորմեայ Քրիստոս Աստուած Վարդկայ ի Քուժ գալըստեանդ որպես առաքակին՝ ի խաչին և

2. Մարտարին՝ ի տաճարին: Ես վարդիկ հայր ստացայ զսուրբ Կարապետս:

3. Արդ՝ որ սուրբ Սարգիսս ար յայս: Ե: եկեղեցուն ժամ վարդկա չառնի

4. Սուրբ Կարապետս եղիցի նզովեալ. իսկ առնելին արհնամ է յԱստուծոյ:

ԺԲ. ՆՈՒՅՆ ՄՈՒՏՔԻ ՎԵՐԵՎՈՒՄ,
ՇՐՋԱՆԱԿԱԾԵՐՏԻ ՎՐԱ

Տեր Աստուած ողորմեա Գագկայ ի Քում գալըստեանդ և պահեա ի չարէ:

ԺԳ. ՆՈՒՅՆ ՏԵՂ, ՆԱԽՈՐԴԻՑ ԱՐԵՎԵԼՔ՝
ՇԱՐՈՒՆԱԿԱՔԱՐ

(արձանագրության սկզբի երեք տողերը խիստ եղծված են ու անընթեռնելի):

4. Յիմոց կամ յատարաց՝ մասն ու բաժին ընդ

5. Յուդաի եղիցի: Աստուածածին տունին ժամն ինձ առնեն:

ԺԴ. ՆՈՒՅՆ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ՝
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ

Ի թվին 2...: Այս գիր ճշմարիտ յուսոյ յիշատակ հոգւոյ (մեծի) Տարսաիճի՝ իշխանաց իշխանի, որդի մեծին Լիպարիտի, եղբայր Սմբատայ արքայի՝ կողմնակալի այսմ նահանգի, որ իշխեցող է ի Բարգուշատայ մինչ ցԳառնի, սահմանք մեր Երասխայ, մեր յոյս Քրիստոս է... զհոգւոց մերոց տուաք ի սուրբ ուխտս զՅախացքարի՝ հողն ի հայրենեաց մերոց, ի Գեղարքունի զգեղն Գառնակեր, և ի Մճռակածոր զմեր ձեռատունկ այգին...: Սպասաւորք՝ Տեր Գրիգոր և այլ միաբանք սահմանեցին Զատկի սուրբ տաճին առաքելոց Պետրոսի և Պաղոսի եկեղեցիս ամենայն պատարագն Ա. աւոր ինձ առնեն՝ Տարսաիճիս, Ա. արն ամուսնոյ իմոյ Մինայ խաթունին: Արդ՝ թէ ի մերոց կամ յատարաց կամ յիշխանաց հակառակի, ՅԺԸ հայրապետացն նզոված եղիցի...:

ԺԵ. ՆՈՒՅՆ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ՝
ԱՐԵՎԱՏՏԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ

Թվին ՈՀԹ (1230). զԱմուսնս յիշեցեր ի Քրիստոս՝

ԺԶ. Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՏ, ՄԻ
ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ

Այս է հանգիստ աղախնոյն Ալատա:

ԺԷ. ՆՈՒՅՆ ՏԵՂ, ՄԻ ԽԱԶԱՐԻ ՎՐԱ

Թվ. 2Բ (1253):

⁹ Եկեղեցու դուռը կողպած լինելու և ձեռքի տակ բանալի չունենալու պատճառով վերջին երկու արձանագրությունները (ԺԴ և ԺԵ) մեջ ենք բերում Ս. Զալալյանից.—Ժամապարհորդության ի մեծն ՀԱՅԱՍՏԱՆ, մասն երրորդ:

ԺԸ. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԹԻ ՄՈՒՏՔԻ
ՃԱԿԱՏԱՄԱՍՈՒՄ, ԱՐՏԱՔՈՒՍ

1. Ես հայր վարդիկ, առաջնորդ սուրբ ուխտի Ցաղաց քարի, շինեցի զսուրբ Կարապետի և կանգնեցի զնշան սուրբ երրորդությանն վա-

2. սն իմ հոգւոյն փրկութեան թերևս ողորմութիւն գտից ի յապագահն ի տիեզերակալ հրապարակին, ուր բանքն ըսպա-

3. ռին և գործքն թագաւորին: Արդ՝ ով սրբազարդ քահանայք որք զսուրբ պատարագն համարձակ մատուցանէք զիս

4. յաղաթս յիշեցեք առաջի զէնլոյն Քրիստոսի, եւ քանի ի Քրիստոսի հաստատութեան է՝ ամէն շաբաթ ար զժամն ինձ առնէ

5. այն քահանան որ ի սեւս պատարագն մատուցանէ:

ԺԹ. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՏՔԻ ՃԱԿԱՏԻՆ,
ԱՐՏԱՔՈՒՍ

1. Ի: ՇԺ: Թ: (1061). կամ եղև ինձ հայր վարդկա և սուրբ

2. Եղբայրս գրել զյիշատակս վասն վարդա՝ Զաքա-

3. րեի որդո, որ մեծ յուսով երես զԲվեայ մարգ և Սեղա-

4. ի այգին, այլ շատ իրք. եւ մեր գրեցաք՝ որչափ ի հաստատուն

5. է եկեղեցիս, զվարդավառին շաբաթն: Ժ: Ե: ար ժամ:

6. Որ խափանէ :Յ: Ժ: Ը: Հայրապետացն նզոված է և նորա մեղացն տեր է:

Ի. Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԹԻ ՆԵՐՍՈՒՄ,
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ

1. Յանուն Աստուծոյ, ես Մարտիրոս զիմ եղեգեաց հայր-

2. էնի հողն՝ զՓորատապն ինչ կա, ու մեռանէի՝ Յա-

3. ղաց քարի սուրբ Յովաննեսս տոյի իմ հարն անդարձ

4. անցեր, որ իմ մահուն յետև Ցաղացքարս և նո-

5. ր ու ոչ ում ոչինչ հաշիվ չկա հետ . . . (ո)-

6. վ որ զիմ անդարձն հետ դարձուցանէ ՅԺԸ (Հայր)-

7. ապետաց նզոված է:

ԻԱ. ՆՈՒՅՆ ՏԵՂ, ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ

1. Յանուն Աստուծոյ, ես Գորգ՝ Դեղին որդի . . .

2. սրտի հուժարութեամբ տվի զիմ գեղն զ . . .

3. ին Աստուածածնին եւ էտվի սուրբ . . .

4. ո առաջնորդութեամբ սուրբ եղ . . . ի ցեղէն ես

5. տվի վասն ծովացեալս և . . . ու ողորմութիւն

6. գտից ես զամուսնին . . . ժամ առ-

7. նեն: Ով այս բանին հակառ (կա ՅԺԸ) Հայրապետաց նզոված է:



ՀԱՆԳԻՍ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳՆԵԼ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՏԱԼՅԱՆԻ

(1885—1970)

1970 թվականի մարտի 31-ին Սուշավա-յում (Ռումինիա) 85 տարեկան հասակում վախճանվեց արժանապատիվ տ. Գնել ա-վագ քահանա Մանտալյանը:

Հանգուցյալը (ավագանի անունով Հով-հաննես) ծնվել է 1885 թվականի սեպտեմ-բերի 4-ին Թուրքիայի Նիկոմեդիա գավառի Օվանըզ գյուղում, երկրաճործի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է իր ծննդավայրում, ապա մեկնել է Արմաշի դպրեվանքը, որտեղ երեք տարի սովորելուց հետո, 1905 թվականից, զբաղվել է ուսուց-չությամբ:

1910 թվականին նա գնում է Ռումինիա և, որպես դպրապետ, ծառայում տեղի հայոց թեմի զանազան եկեղեցիներում:

1921 թվականին նա Գնել եպս. Քալեմ-քերյանի ձեռամբ Պրայլայի հայոց եկեղեցում ձեռնադրվում է քահանա՝ վերանվանվելով տ. Գնել: Այնուհետև տեղ հայրն անցնում է Սուշավա, որտեղ որպես հայոց հոգևոր հո-վիվ ծառայում է մինչև իր կյանքի վերջը:

Իր ժրաջան և բեղմնավոր հոգևոր գոր-ծունեության համար տեղ հայրը դեռևս 1924 թվականին ստանում է լանջախաչ կրելու ի-րավունք. 1936 թվականին Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսից ստանում է ծաղկյա փիլոն կրելու իրավունք, իսկ 1965 թվականին ազ-գիս Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ը նրան շնորհում է ավագության աստի-ճան:

Արժանապատիվ տ. Գնել ավագ քահա-նան իր հոգևոր ծառայության մեջ հանդի-սացավ ժրաջան և ավանդապահ հովիվն ու հայրը ժողովրդի, սիրված ու հարգված հո-գեվորականը հայ և ռումին շրջանակների մեջ:

Ռումինահայ մեր թեմը կորցրեց իր հա-




վատավոր և արժանավոր հոգևոր սպասա-վորներից մեկին:

Արժանապատիվ տեղ հոր վերջին օծումը և թաղման կարգը կատարել է ապրիլի 3-ին թեմի առաջնորդ գեր. տ. Տիրայր եպս. Մար-տիկյանը:

Հանգիստ իր ոսկորներին:

«Յիշատակ արդարոց օրհնութեամբ եղի-ցի»:



ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒՍ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 246

ՔԱՐՈՂԳԻՐՔ

Թերթերը՝ 345:—Պրակները՝ 33, ձեռագրի սկզբում (պրակներ 2—Ժ2) 3-ական թերթ, իսկ վերջում (պրակներ ԺԷ—ԼԸ) 12-ական թերթ, ի բաց առյալ հետևյալ պրակները. ԺԵ՝ 7, ԼԸ՝ 8 և Ի՝ 10 թերթերից են:—**Մեծությունը՝** 15×10,5×4 սմ.:—**Նյութը՝** դեղնածավառ և խոնաված հասարակ թուղթ:—**Կազմը՝** չունի: Նույն ձեռագրից երկու թերթեր կպցրել են ձեռագրի կոնակին:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** անբավարար, պակասում է և՛ վերջից, և՛ սկզբի հինգ պրակները ամբողջությամբ:—**Գրությունը՝** միապետ:—**Պատարկ թղթեր՝** չկան:—**Տողերը՝** 16—17:—**Գծումները՝** ճշգրտով:—**Գիրը՝** նոտագիր:—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի մի հատ զարդագիր (թ. 206 բ), երկու հատ թռչնագիր (թ. թ. 146ա և 151բ) և երկու հատ լուսանցազարդ (թ. թ. 146ա և 151բ), բոլորն էլ նկարված շատ հասարակ ոճով:—**Գրիչը՝** Հակոբ վարդապետ Երևանցի:—**Պատվիրատուն՝** Հովհաննես վարդապետ:—**Ծաղկողը՝** անհայտ, հավանաբար գրիչը՝ նույն ինքն Հակոբ վարդապետը:—**Ժամանակը՝** 1688 թ.:—**Վայրը՝** Օռշ (Սպահան):—**Ծանոթություն՝** ստացված է նվեր արտասահմանից Վեհափառ Հայրապետի միջոցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 19ա.—Վկայությունը Հարանց վարուց:
Թ. 33ա.—Նախ ի բնագանցականէն Արիստոտելի որ ասի մէթաֆիզիկայ, վկայությունը, Երկրորդ պրակ:
Թ. 42ա.—Ժո(ղ)վեալ հաւաքեցաք պատմութիւնքս ի լատինացոց հայելի վարուցն:
Թ. 81բ.—Ի չորեքտասան թղթոցն Ակակայ Կոստանդնուպոլսի հայրապետի և Պետրոսի Աղէքսան-

դրոյ հայրապետի, զոր յետ ժողովոյն Քաղկեդոնի գրեցին առ միմեանս Ակակայ առ Պետրոս:

Թ. 83բ.—Սրբոյն և Ագրես անմարմնոյն ի մարմնի որ զարդ և միտ անապատի կոչի նորին խրատ ոգէշահ:

Թ. 94ա.—Յաղագս հարկատրութեանց հաւատոյն: Առանց հաւատոյ անհնար է հաճոյանալ Աստուծոյ:

Թ. 96բ.—Յաղագս ուրացելոց զԱստուած, անհատոց և հերձուածողաց: Յաղագս յուսոյ:

Թ. 98ա.—Յաղագս սիրոյն Աստուծոյ և բնկերին:

Թ. 103բ.—Պետրոսի երկրորդ թղթոյն:

Թ. 107ա.—Ի թղթոյն Երանելոյն Յովհաննոս Աւետարանչի:

Թ. 109բ.—Ի թղթոյն Երանելոյն Յուդայի:

Թ. 110ա.—Ի մեկնչէն Յոհաննոս տեպեանն:

Թ. 114բ.—Յաղագս եթէ Աստուած եղև առանց փոփոխման, նոյնպէս և մարդն Աստուած եղև առանց փոփոխման:

Թ. 117ա.—Յաղագս կամացն որ մի է և ոչ երկու:

Թ. 118ա.—Յաղագս թէ Քրիստոս մի է բնութեամբ, ներգործութեամբ և կամօք, նոյն Քրիստոս մեռաւ և յարեաւ:

Թ. 123ա.—Յաղագս թէ փափն ոչ է գլուխ արիսանցից:

Թ. 125ա.—Յաղագս քաւարանին և եղծումն նորին:

Թ. 127բ.—Որ առնէ խորհուրդ Եկեղեցւոյ:

Թ. 129բ.—Քանիք են պարգևք հոգւոյն:

Թ. 132ա.—Սահմանք ի գրոց մոլութեանց:

Թ. 142ա.—Սրբոյն Բարսեղի Կեսարացոյ հայրապետին ասացեալ, յաղագս պահոց ի գիրս որ կոչի փոլեցէք:

Թ. 144բ.—Սրբոյն Գրիգորի Նիսացոյ ասացեալ ի մեկնութենէ թ երանութեանց:

Թ. 164ա.—Աւգնես Սուրբ Հոգի Աստուած Եռամեծի Յովհաննոս Որոտնեցոյ ի բան Աւետարանին որ ասէ, և յամենանց զերրորդի առաքացաւ:

Թ. 151բ.—Նորին քարոզ Ծմբղեան ի բանն, բանն մարմին եղև և բնականաց ի մեզ:

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից և 1968 թվականի № Է-ից:

Թ. 169ա.—Յայլմէ քարոզ վասն մկրտութեան ի բանն ի քէնէ Տէր աղբեր կենաց և լուսով, արդ պէտք ասեն թէ երկիրս ոչ տայ պտուղ, վասն կրկին պատճառի:

Թ. 180բ.—Նորին քարոզ գալստեան Տեառն քահանայի ի տաճարն ի բանն, արդ արձակես զճառայս քո Տէր ըստ բանի:

Թ. 193ա.—Դարձեալ քարոզ Ծաղկազարդին ի բանն, արհմեալ որ գաս անուն Տեառն և օրհնեսցոր զքեզ ի տնէ Տեառն:

Թ. 206բ.—Նորին մեծի Ե. շափաթի, առաջին քարոզ, խորհուրդ ճշմարիտ Պատարագին Քրիստոսի ի բանն Պաղոսի, գիշերին որում մտանէր Յիսուս առ հաց գոհացաւ երեկ և ասէ: Այս է մարմին իմ, և այս է արիւն իմ:

Թ. 215բ.—Յայլմէ քարոզ մեծի ուրբաթին սուգն ի բանն Առաքելոյն, կտակ յետ մահուան հաստատանէ: (Ս)ովորութիւն է մարդկան յորժամ մեռանի որ ի յայ տեղիս և առնէ կտակ:

Թ. 222ա.—Նորին քարոզ վասն յարութեան ի բանս Երզ երգոցն, որ նստին ի պարտէզս այլք անասն քեզ, լսելի արայ ինձ զձայն քո, ասէ իմաստունն:

Թ. 238ա.—Քարոզ Համբարձմանն ի բանն հանէ զաշակերտսն ի Բերանիայ, ամբարձ զձեռն իւր արհմեաց զնոսա և ել յերկինս:

Թ. 250ա.—Նորին քարոզ գալուստն Սուրբ Հոգւոյն ի բանն Դաւթի, ի գումարել երկնաւորին զթագաւորս ի վերա նորա ձիւնացի սաղմոն:

Թ. 261բ.—Նորին դարձեալ քարոզ վառդավառին, ի նոյն բանն և յետ վեց ատուր առնու զՊետրոս և զՅակոբս, և հանէ ի լեառն և այլակերպեցաւ առաջինաց:

Թ. 276ա.—Նորին քարոզ Աստուածածնին և փոխմանն ի բանն Սողոմոնի յերգս երգոցն, պարտէզ փակեալ և աղբիւր կնքեալ:

Թ. 279բ.—Նորին քարոզ Խաչի տօնին ի բանն, փայտ կենաց է ամենեցուն որք պատսպարին ի նա և որ յենուն ի նա իբր տէր հաստատութեամբ:

Թ. 297ա.—Յայլմէ քարոզ վասն ննջեցելոց, ի բանն Յովբայ, ողորմեցարուք ինձ, ողորմեցարուք որ բարեկամք իմ, զի ձեռն Տեառն մխեցաւ յիս:

Թ. 305ա.—Վկայութիւնք պիտանիք և հարկաւորք վասն առ ի պատրաստ գոյոյ ի ձեռս խնդրողաց բանի, եթէ ի պէտս քարոզութեան, և թէ ի պէտս վիճաբանութեան մանաւանդ ի պէտս գիտութեան:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 16ա.—Վասն Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ ով մա[ն]կա[ն]ացու, յիշեալ զանարժան զՅովաննէս վարդապետ, որ ի թուին ՌՃԼԷ (1688 թ.) և ի յօգոստոս Զ մակագրեցի ի վաշելումն որդեկին մերոյ յԵրևանցի Յակոբ վարդապետն, (թ. 16բ) զոր վասն ըստահակաց նստելով ի տան մերում գրեցի զայս գիրքս:

Թ. 32ա.—Այս մակագրեցաւ ի թուին ՌՃԾԱ (1702 թ.) փետրվար ամսոյ ի տասն և չորք քահանօրեա գալստեան Փրկչին ի նոյն յատուր ձեռամբ փանաքի Յակոբ Լեթ վարդապետի յԵրևանցոյ ի Շօշ քաղաքիս:

Թ. 124բ.—Ով ցանկալի ի միաբնակ եղբայր յիշեալ զՅակոբ թշուառ ոգի յԵրևանցիս զծող և դու յիշեալ յիշիս յատուր անետ ատենի:

Թ. 221բ.—Եւ եղկելի Յակոբ Լեթ գրիչս յայսմ հրաշափառ յատուր մեծի, աղաչեմ յիշել ի Տէր և Աստուած որ առաւուն յիշէ զձեզ ի բարին իւրոյ, ամէն, Հայր:

Թ. 275բ.—Դարձեալ մաղթելով աղաչեմ արտասուանել աչօք ով ընթերցողք միագումար և սրբազանից խումբք, ո՞ր հանդիպիք այս փոքր տառիս, յիշեցէք տարտամ Յակոբ գրիչս յԵրևանցի:

Թ. 296բ.—Ով դասք երամից սուրբ վարդապետաց, յորժամ հանդիպիք այսմ ծաղկեալ և անուշահոտ դուզնաքեա պտղաւետ բուրաստանիս, և ճաշակմամբ սորին. յիշել աղաչեմ զմեղօք մածեալ փանաքի զՅակոբ Լեթ սուտանուն վարդապետս յԵրևանցի, և զձեռնոյն իմ զԽաչատուր քահանայն, և զԳեօզալ տատն, և զեղբարսն իմ զՊօղոսն, և զԹօվմասն, և դուք յիշեալ յիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ:

Թ. 338բ.—Զմեղաւոր թշուառ գրիչ Յակոբ յետնեալս յԵրևանցի, յիշեցէք ի Քրիստոս և թողութիւն շնորհէք:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 32բ.—Այսօր յարեալ բանն հայրական առեալ մարմնօվն անբաժանական: Այսօր յարեալ որդին կուսական, Աստուած և մարդն անփոխադրական: Ասօյաւեա:

Թ. 123բ.—Եթէ ես ապողոսեան եմ:

Թ. 304բ.—Կաշառ կուրաց:

(Շարունակելի)

277:

7476. [ՔԵՎՈՐՔ Ե:—Գրություն օրհնության վի

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1968 թ. №№ ԺԱ.—ԺԲ-ից, 1969 թ. №№ Ա.—Թ-ից և 1970 թ. №№ Ա.—Գ-ից:

յամսին, անգլիական կառավարության ջանքերով հրատարակված Հայկական կոտորածների կապույտ գրքից մեկ օրինակ կարողիկոսին ուղարկելու համար]: 1917, էջ 277:

7477. [ԳԵՎՈՐԳ Ե:—Գրություն օրհնության Վրաստանի հայոց առաջնորդին՝ Ախալքալաքի մանճրա գյուղում հայկական ծխական դպրոց բացելու առթիվ]: 1917, էջ 675:

7478. [ԳԵՎՈՐԳ Ե:—Գրություններ՝ Գ. ճեմարանի վարչությանը, Ղարաբաղի, Ներսիսյան և Նոր Նախիջևանի հայոց հոգևոր թեմական դպրանոցների հոգաբարձուներին, լուսավորության նախարարի թույլտվությունը՝ հայոց թեմական դպրոցավարսներին ընդունվելու ուսական համալսարանները]: 1917, էջ 686:

Նույն հարցի առթիվ Սինոդի որոշումը, էջ 701:

7479. [ԳԵՎՈՐԳ Ե:—Գրություններ Երևանի փոխ-թեմականին, Վրաստանի առաջնորդին և ս. Էջմիածնի Եղբայրական օգնության հանձնաժողովին՝ հայ գաղթական որբերին ուսման ընթացքում կանոնադրող եկեղեցի տանելու վերաբերյալ]: 1917, էջ 13:

7480. [ԳԵՎՈՐԳ Ե:—Երևանի փոխ-թեմական Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանին, առաջարկել թեմում գտնված վանի բահաններին վերադառնալու իրենց պաշտոնավարները]: 1917, էջ 17:

7481. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ Աստրախանի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին, Տուապետ քաղաքում հայոց եկեղեցական-ծխական դպրոց բացելու համար]: 1917, էջ 8:

7482. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ Աստրախականի հայոց թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանին, վանի, Բալաստի և շրջակայքի առաջնորդությունների տեսուչ նշանակելու մասին]: 1917, էջ 415:

Ազատման մասին՝ էջ 686:

7483. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ՝ Բաքվի, Արմավիրի, Եկատերինոդարի, Նոր Նախիջևանի, Մոսկվայի և Պետրոգրադի հայերին, դրամական օգնություն կազմակերպել ճեմարանի գոյությունը պահպանելու համար]: 1917, էջ 20:

7484. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանին Մայր Աթոռի թանգարանապետ և Սենեքերիմ Տեր-Հակոբյանին նրան օգնական նշանակելու մասին]: 1917, էջ 681:

7485. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ՝ Ջաֆեն եպիսկոպոսին ս. Հովսիսյան վանքի վանահայր կարգելու մասին]: 1917, էջ 681:

7486. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ՝ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանին՝ Գալանի վանքի վանահայր նշանակելու մասին]: 1917, էջ 681—682:

7487. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ Ղարաբաղի թեմի առաջնորդ վահան եպիսկոպոսին՝ Վարանդայի շրջանի Միրիշանյու գյուղում ծխական դպրոց բացելու առթիվ]: 1917, էջ 678:

7488. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ Ղարաբաղի թեմի կառավարչին, թեմի Աղբուլաղ Ախեցիք և Նեմեթապատ գյուղերում եկեղեցական-ծխական դպրոցներ բացելու համար]: 1917, էջ 423:

7489. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ՝ Շամախու հայոց թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոսին, և մի շարք անձանց հաստատել Ջանգու ամլի շինարարության հանձնաժողովում, նախագահությանը՝ առաջինի]: 1917, էջ 279:

7490. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ Սահակ արքեպիսկոպոս Այվազյանին Մայր տանարի լուսարարապետ նշանակելու մասին]: 1917, էջ 682:

7491. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ սինոդին 1914 թ. հոկտեմբերի 15-ին ընդունված եկեղեցական և ազգային տոների ցուցակի մեջ մտցնել նոյեմբերի 21-ին տոնվող Ընծայումն ս. Աստվածածնի ի տանար տոնը և այդ ցուցակի պատճեններն ուղարկել բոլոր ուս-

սանալ թեմական առաջնորդներին ի հրահանգություն և ի կատարումն]: 1917, էջ 15:

7492. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսին, Ղազախի գավառի Ռևազի գյուղում հայոց եկեղեցական-ծխական դպրոց բացելու համար]: 1917, էջ 86:

7493. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսին, Միքադվա գյուղում, ըստ համայնքի ցանկության, եկեղեցական-ծխական դպրոց բացելու համար]: 1917, էջ 417:

7494. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ Վրաստանի հայոց թեմի առաջնորդին, Թիֆլիսի գավառի Ղարաթափա գյուղում հայոց եկեղեցական-ծխական դպրոց բացելու համար]: 1917, էջ 7:

7495. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ Վրաստանի հայոց թեմի առաջնորդին, համաձայն հայ համայնքի որոշման, ծխական եկեղեցական դպրոց բացել Լոռու գավառի Այգեհատ գյուղում]: 1917, էջ 12:

7496. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ Վրաստանի հայոց թեմի առաջնորդին՝ Ջաբուլաղ գյուղում հայոց եկեղեցական-ծխական դպրոց բացելու համար]: 1917, էջ 9:

Նույնը՝ Կոչորում բացելու համար: Էջ 9: Նաև՝ Ջերդ, Կարալեթ, Ղարադաշ և Ջեզի գյուղերում: Էջ 9—10:

7497. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ Վրաստանի հայոց թեմի առաջնորդին Սուխումի շրջանի Յաշարա գյուղում, համաձայն ծխականների որոշման, եկեղեցական-ծխական դպրոց բացելու մասին]: 1917, էջ 90:

7498. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության Ալեքսանդր Արովյանին՝ Մեծ Ղարաբիխա գյուղի դպրոցին և գրադարանին 2000 ռ. նվիրելու համար]: 1917, էջ 685:

7499. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության Անուշավան Հովհաննեսի Ղազանջյանցին, Թիֆլիսի Սարրոբալու արվարձանի հայոց ծխական դպրոցի պահպանության օգտին 15.000 ռ. նվիրաբերելու առթիվ]: 1917, էջ 93:

7500. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության Արևմտահայ գաղթական ուսուցիչների համագումարին, նաև հինգ հազար ռուբլու նվիրատվություն]: 1917, էջ 422:

7501. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության բարվարակ Համբարձում Ազատյանցին, Վարդաշեն գյուղի եկեղեցական ծխական դպրոցին 10.000 ռ. կտակելու առթիվ]: 1917, էջ 419:

7502. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության բարվարակ վաճառական Ավետիս Գաբրիելի Արուսյանցին, Բաքվի Հովսիսյանց դպրոցին և Ղարաթա գյուղի ծխական դպրոցին 25.000 ռ. նվիրելու առթիվ]: 1917, էջ 92:

7503. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության՝ Եգիպտոսի առաջնորդին և Կարմիր Նաչի ընկերություններին, հալ փախստական որբերը ժողովելու և նրանց պահպանելու համար]: 1917, էջ 85:

7504. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության թիֆլիզեցի վաճառական կարենցի Գևորգ Թորոսի Իլլեանին՝ Թիֆլիսի, Ալեքսանդրապոլի դպրոցներին, հալ բարեգործական զանազան ընկերությունների 6950 ռ. նվիրելու առթիվ]: 1917, էջ 93—94:

7505. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության Ժենի Հայանապատ հանձնաժողովի նախագահ Լիսյուղ Ֆավրին՝ հայերին ցույց տված օգուտաշատ գործունեության առթիվ]: 1917, էջ 420:

7506. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության Հակոբ Ղուկասյանին՝ ի նպատակ ճեմարանի 10.000 ռ. նվիրելու առթիվ]: 1917, էջ 687:

7507. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության Մայր Աթոռի Ջանգվի ամլի շինարարության Բաքվի հանձնաժողովի անդամներին, շինարարության օգտին

հանգանակած և փոխադրած 29.000 ուղևոր համար]: 1917, էջ 589:

7508. [ԳԵՎՈՐԳ Ե.:—Կոնդակ օրհնության Միր-զաֆան և Թագուհի Միրզաբեկյաններին, նաև՝ Խազաֆան և Թագուհի Միրզաբեկյանին Շամախու հայոց թեմանում Տեր-Հովհաննիսյանին Շամախու հայոց թեմական դպրոցին 100.000 ռ. նվիրելու առթիվ]: 1917, էջ 87:

7509. [ԳԵՎՈՐԳ Ե.:—Կոնդակ օրհնության Նիկոլայու Ալեքսանդրի Ղուկասյանցին, Գանձակի մոտ գտնված ս. Գևորգ ուխտատեղին իր ծախքով նորոգելու համար]: 1917, էջ 675:

